



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԵՏՐԱՌԻ  
ԵՎԱՆԳԻԼԻԿԱՆՈՒՄ

№ 48—49

№ 48—49

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՅԵՎ  
ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

891.99  
Բ-89

ԳԵԶԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՁԵՐԵԳՈՒՆ  
1934

16 NOV 2011

ՊԵՏԱՐԱՔԻ ԹՈՒԹՈՒՆ ԳՐԱԴՐՈՒՅ

№ 48-49

№ 48-49

891.99

ՀՈՎԵ. ԹՈՒՄԱՆՑԱՆ

Ամ.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՅԵՎ  
ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1007  
3375



ՊԻԶՈՐ ԿՈՎՈՒՅԻ ՅՈՒՆ

1984

123.04.2013

32320

Պատմագիր

Նյութերը տպագրության համար պատրաստեց Նվազդ Թումանյան  
Տնիւ Խմբագիր՝

Մ. ՅՈՒՐ. ԼԵՐՄԱՆՑՈՎ.

Մ Ս Ւ Բ Ի Ւ \*)

Ճաշակելով նաշակեցի գուկաւ մի մեղք,  
և անս մեռանեցիմ ես:

Ա. զիրք թագ.

I

Սըրանից տոտջ մի քանի տարի,  
Այնանդ ուր Արագվ ու Կուր գետերի  
Զըրեն աղմուկով խառնըվում էրար,  
Գըրկվում են էրկու քուրերի նըման,  
Կար մի մենաստան: Կարող ե այժմ ել  
Անցորդը սարի ուսերից տեսնել  
Քանդված գոների կտնգուն սյուները,  
Վանքի կամարն ու աշտարակները:  
Բայց անուշահոտ ծուխը բուրվառի  
Ել չի վերանում կամարի տակին ~  
Յեվ վոչ լավում ե աղոթողների  
Յերգը գիշերվա ուշ ժամանակին:  
Այժմ մեն մենակ զառամյալ մի ծեր,  
Ավերակ վանքի պահնորդ կիսամեռ,  
Ընկած մտքիցը մարդկանց ու մահի,  
Սըրում ե փոշին շիրմաքարերի,  
Վորոնք պատմում են անցած դարերի,

Հրատար. № 2955, Գլավիտ № 8523 (բ),  
պատվեր № 681, տիրաժ 5000. Պետ-  
հրատի տպարան, ստ. Փ. 6 72×105, մեկ  
տպ. թերթում 102.400 տպ. նշ. հանձնված  
ե արտադրության 5|V 1934 թ., ստորա-  
գրված ե տպագրության [20]V 1934 թ.՝

\*) Մժբիր գրացերին նշանակում ե նժղին, յեկիոր, անո-  
պատական:

Անցած փառքերի ու նըրա մասին,  
թե ինչպես ճնշված իր թագի տակին,  
Այս ինչ թագավորն, այս ժամանակին  
իր ժողովուրդը հանձնեց ոռւսին:

## II

Մի ոռւս գեներալ կովկաս լեռներից  
Մի անգամ զեղի թիֆլիս եր դալիս,  
իր հետ նա գերի մի մանուկ ուներ.  
Սա տըկարացավ, չը կարաց տանել  
Նեղությունները հեռավոր ճամփի:  
Հաղիվ թե լիներ հինգ վեց տարեկան,  
Անձեմիկի պես լերկչոտ, վալրենի  
Յեղ թուլ ու ճըկուն լեղեգնի նըման:  
Սական նըրա մեջ ցալը տանջալի  
Զորացրեց այնժամ իրեն հալրերի  
Աննկուն հոգին: Վիշտը լուռ տանում,  
Յեղ իր մանկական տըկար շըթունքից  
Մի թուլ հառաջանք նույն իսկ չեր հանում:  
Հացը նըշանով մերժում եր նա դեն  
Ու խաղաղ հպարտ մեռնում եր արդեն:  
Կարեկցությունից մի ծեր վանական  
Նըրան խնամեց, տվավ ապաստան.  
Ու ալսպես՝ վանքի հարկի տակ մնաց  
Բարեկամական ձեռքով ազատված:  
Բալց, զուրկ մանկական զըվարթ հաճուկքից,  
Փախչում, խորշում եր նա ամեն մեկից.  
Թափառում եր լուռ, մենակ, սրտաբեկ,  
Թառանչով նայում դեղի արևելք,  
Մաշվելով մի լուռ, անմեկին վըշաից —

Իրեն հալրենի լերկրի կարոտից:  
Գերության սական շուտ ընտելացավ,  
Ոտարի լեզուն քիչ-քիչ հասկացավ.  
Հայը սուրբը կընքեց, տըվավ սուրբ հաղորդ,  
Ու գեռ աշխարհի կընքին անծանոթ,  
Ուղում եր արդեն ծաղիկ հասակում  
Աբեղալական ընդունել կոչում,  
Յերբ վոր մի անգամ աշնան գիշերով  
Անհետ չըքացավ: Շուրջը սարերով  
Զըգլում եր անծայր անտառը մըթին,  
Յերեք որ այնտեղ իդուր ֆընտուցին,  
Վերջապես դաշտում անըզգա գուան  
Ու առան կըրին բերին մենաստան:  
Նա սաստիկ գունատ, թուլլ եր ու նիհար.  
Կարծես աշխատել, տանջվել եր լերկար,  
Կամ հիվանդություն ու սով եր քաշել:  
Հարցմունքներին նա չեր պատասխանում,  
Որն որի վրա ընկնում եր, խամրում:  
Ալսպես մոտեցավ ժամը իր մահվան:  
Անժամ նըրա մոտ յեկավ աբեղան  
Յեղ հորդորելով և աղերսելով:  
Հիվանդը հպարտ նըրան լըսելով  
Նըստեց, մընացած ուզքը հավաքեց,  
Ու ալսպես լերկար խոսել սկսեց.

## III

«Գոհ եմ քեզանից, հայը սուրբ, վոր լեկտը  
իմ խոստովանքը լըսելու համար:  
Ինչ ել վոր լինի, իմ սիրու ցավոտ  
կուզելի բանալ խոսքով մեկի մոտ:

Սակայն իես մարդկանց չարիք չեմ արել,  
իմ արարքները նորա համար ել—  
Ի՞նչ ոգուտ լեթե խոստովանելի.  
Իսկ հոգին միթե պատմել կըլինի...  
Յես քիչ եմ ապրել և այն ել գերի.  
Այսպես յերկու կյանք մի աղմըկալի,  
Յեռուն կյանքի հետ, վոր տեսել եմ, ծեր,  
Յես կը փոխելի թե հընար լիներ:  
Յես լոկ մի մըտքի ուզի եմ իմացել.  
Մի, բայց բոցավառ կիրք եմ ունեցել,  
Նա ինչպես մի վորդ ապրել և իմ մեջ,  
Կըրծել ե հոգիս, մաշել մինչև վիրջ,  
Իմ ցնորքները թոցըել տարել և  
Այս նեղ խցերից անդորր աղոթքի  
Այն վեհ աշխարհը կըռովի, աղմուկի,  
Ուր վոր ժայռերը թագչում ամպերում,  
Ու մարդիկ այնպես ազատ են ապրում...  
Յես իմ այդ կիրքը գիշերվա մըթնում  
Պահել եմ վըշտով, արցունքով սընել.  
Յեկ այժմ ահա բարձրածայն հայտնում,  
Խոստովանում եմ առջն աշխարհի,  
Ու թողություն ել չեմ խնդրում իսկի:

## IV

«Ծերուկ, շատ անգամ իմացել եմ իս,  
Վոր դու իմ կյանքը մահից փըրկել ես:  
Ինչու փըրկեցիր: Մենակ ու դաժան,  
Փոթորկի պոկած աերեկ նըման,  
Մըռալ պատերի միջում մեծացա,  
Հոգով դեռ մանուկ, կյանքով աբեղա:

Չը կարողացա վոչ վոքի ասել  
«Հալրիկ» ու «մալրիկ» սրբազան խոսքեր:  
Հարկավ, քո միտքը այն եր, ծերունի,  
Վոր մենաստանում լիս խորթանակի  
Եսքան քաղցրալի այս անուններին,  
Զուր, հետըս ես նրանց ձախները ծընվեր  
Յես տեսնում ելի, վոր ուրիշներին  
Հալրենիք, ընկեր, ծնող ունելին,  
Մինչդեռ չոնեցի լիս նրանց նըման  
Վոչ թե սիրելիք — այլև գերեզման:  
Յես ել այն որից իղուր չողբացի,  
Այլ ճողում միջում ալսովես ուխտեցի,  
Վոր յերբեկցի, թեկուղ մի վայրկլան,  
Այս իմ բոցավառ կուրծքը մանկական  
Սեղմեմ կարուով մի ուրիշ կըրծքի,  
Թեկուղ անծանոթ — միայն հարազատի:  
Բայց, ավաղ, հիմա յերազներըս այն  
Կորել են իրենց պերճանքով համայն,  
Ու ինչպես ոտար յերկրում ապրեցի՝  
Մեռնում եմ գարձաւ լիս վորը ու գերի:

## V

«Ինձ չի վախեցնում գերեզմանն ահեղ,  
Տանջանքն, ասում են, հանգչում ե այնտեղ  
Սառն, հավերժական լըռության միջում:  
Կյանքից զրկվելու և ինձ մենակ տանջում:  
Զահել եմ, զահեր.. ունեցել ես դու  
Ցնորմունքները անհոգ պատանու:  
Դու չես ունեցել կամ չես հիշում ել,  
Թե վոնց ես մի որ ատել ու սիրել,

Ինչպես և սիրուդ բաբախել ուժգին  
Կանաչ դաշտերին, վառ արեգակին  
Անկունի բարձը բուրդից նախելիս,  
Ուր թարմ և ողը, և ուր մերթ գալիս  
Ուր բարձր պատի խորունկ ճեղքվածքում,  
Բուքից վախեցած, կուչ լեկած նստում,  
Պատըսպարվում և փոքրիկ աղամին —  
Չըքնաղ զավակը անհայտ աշխարհին  
Ուր մընաց՝ արդեն զառամ ես, թուլլ ես,  
Սիրուն աշխարհը կըշտացրել ե քեզ.  
Սրտումդ անկատար ել չունիս ըդձեր...  
Ել ինչ ես ուզում, ապրել ես դու, ծեր,  
Աշխարհքում ունիս մոռնալու մի բան.  
Զե վոր կապրելի յես, ել քեզ նըման...

## VII

«Կուզես իմանալ աղատության մեջ  
Յես ինչեր տեսա, — դաշտեր տեսա պերճ,  
Բըլուրներ տեսա, ուր կանաչ ծառեր,  
Ինչպես շուրջպարի բըռնած իեղբալըներ,  
Չորս կողմից դալար պըսակ կապելով  
Շըշընջում ելին թարմ խըմբակներով:  
Տեսա դեղերը մոալլ ժալուերի,  
Յերբ բաժանում եր վտակը նրանց,  
Նրանց մտքերը հասկանում ելի, —  
Վերեկիցն եր այն շնորհքն ինձ տըլած:  
Վաղուց, շատ վաղուց ողում տարածված  
Այն քարի գրկերն ամեն մի վարկան  
Փափագում են լուռ իրար հանդիպման,  
Բայց որեր անցնում, տարիք են անցնում,

Ու նրանք յերբեք իրար չեն համում,..  
Բարձը յեռների շարքեր տեսա յես  
Վեհ, հըրաշալի ցընորքների պես,  
Յերբ արշալույսի ժամին վաղորդյան  
Նրանց գըլիները սեղանի նըման  
Ծխում են հանդարա կապուտ յերկնքում,  
Ու ամպը ամպի վետեից ձըգվում,  
Թողնելով գաղանի իր ոթեանը,  
Ինչպես տարադնաց ընպիտակ հակքի  
Հեռու կողմերից չըվող յերամը  
Ուղղում ե իր չուն կողմն աբեկերին  
Անոսր մշուշի տըանքից, հեռվում,  
Գոհարի նըման փալող ձյուներում,  
Տեսա ալեոր կովկասն անսասան.  
Յեվ յես չը գիտեմ թե ընչիցն եր այն,  
Բայց թեթևացավ սիրտս նույն ժամացն.  
Ըսկսեց գաղանի մի ձայն ինձ ասել,  
Թե յերբեմն այստեղ ապրել եմ յես ել...  
Ու հնաըզիեսն բացիկցավ խավար  
Անցյալն իմ մաքում պարձմու ու պայծմո...

## VIII

«Յեվ յես հիշեցի մեր տունն հայրական,  
Հիշեցի մեր ձորն ու իր շըրջական  
Շըլաքում ցրված գյուղի տըները.  
Լսեցի ըիկվան ձեն ու ձուները  
Դեպի տուն վաղող յերամակների,  
Հեռու հաջոցը ծանոթ շըների:  
Միտս յեկան թուխ-թուխ ծերունիները.  
Լուսնյակի լուսով իրիկունները

Իմ հոր սըսահի, շնմքի գեմուղեմ  
Նստուած խոհուն ու խոժուադեմ.  
Ա. խանչախների պղընձալատած  
Պատշաճների փայն... ու բոլորն հանկարծ  
Խառը շարքերով, իրավի նըման  
Աշքիս առաջից յիկան անցկացան:  
Հապա իմ հմայը. պատերազմական  
Իր զգեստներով, ինչպես կենդանի  
Աշքիս լերեաց, ու միաս յեկան  
Զրահի շուխող, փայն հըրացանի,  
Նրա հայոցքը հպմբո, աննիշւն,  
Յել իմ քույրերը մատազ, սիրասուն...  
Շողերը նրանց աղու. աշքերի  
Յել հնչունները յերգի, խոսքերի,  
Վոր ասել եյին որրանիս վըրա...  
Այն ձորի միջով գատկ եը վազում,  
Աղմկող եր նա, սակայն վոչ խորին,  
Նըրա վոսկեդույն մանրիկ ավաղում  
Խաղալու եյի գընում կեսորին,  
Յել նայում ելի աշքերը հանած,  
Յերբ ալիքներին, անձրեից առաջ,  
Դիպչում եը թիով ու ծիծեռնակը,  
Հիշեցի և մեր խաղաղ աղնակը,  
Ոջակի տոջն էրիկունները  
Արած այն յերկար պատմութիունները,  
Յե վոնց են ապրել մարդիկ վաղեմի,  
Յերբ գետ աշխարհքը ճոխ եր ամելի:

## VIII

«Կուգիս խմանալ, թե իս ինչ արի  
Այն յերեք որում: — Ազատ ապրեցի,  
Յել կանքըս առանց այն յերեք որի  
Թո ուզից ընկած ծերութից ել դու  
Ավելի արժուած արձակ գաշտերին նայի,  
Միանգամ արձակ գաշտերին նայի,  
Տեսնեմ՝ աշխարհքը սիրուն և արդուք,  
Ինչու յենք, ահենեմ, գալի մենք աշխարհ,  
Ազատ ապրելու, թե բանափ համար:  
Յել այն գիշերվա սոսկալի ժամին,  
Վորոտմունքն յերբվոր վախեցրել եր ձեզ,  
Սեղանի առջև յերբվոր խըմբովին  
Ընկել ելիք դուք իըմբնված այսպես,  
Յես վանքից վախա: Ո՞, ինչպես լեզրալ  
Կուզելի գըրկել մըրըկեն հողմաղալը.  
Աշքերս ամպերի վասից տանում,  
Զեսքով շանթ ելի բանել ցանկանում...  
Դե ասա, հայրիկ,  
Ինձ այս պատերում ինչ պիտի տույիք  
Իմ փոթորկալի սըրտի և անեղ  
Այն վորոտմունքի մտերմության տեղ...»

## IX

«Յերկար վազեցի, թե ուր կամ վորտեղ,  
Այդ յես չը գիտեմ: Յել վոչ մի ասորը  
Իմ գժվար ճամբան չեր լուսավորում:  
Միայն բերկութիւմբ շունչ ելի տոնում  
Իմ վաստակարեկ ու հոգնած կրծքով

Այն անտառների թարմությունը զով։  
 Յերկար վազեցի. վերջապես հոգնած  
 Բարձրը խոտերում ընկա ու պառկած  
 Ականջ դըրի յես. հետևող չըկար։  
 Վորոտմունքն ընկափ. լույսը մի յերկար  
 Տժգույն ու դալուկ շերտով բացվելով  
 Զգլեց յերկնքի — յերկը արանքով,  
 Յեվ նրա վերա յես վորոշեցի  
 Սուր ժանիքները հեռու լեռներէն  
 Անձայն ու անշարժ յես պառկած եյի,  
 Յերբեմն յերբեմն չախկալը կիրճում  
 Յերեխի նըման լալիս եր ճըշում,  
 Յեվ, հարթ ու փայլուն թեփով փայլելով,  
 Սողում եր ոճը քարերի միջին.  
 Չեր ճնշում սակայն յերկյուղն իմ հոգին,  
 Յես ել գայլի պես խորթ եյի մարդոց,  
 Յեվ սողում եյի, թագչում ինչպես ոճ։

## X

«Ներքե անդընողում, ինձանից շատ ցած,  
 Զուրը հեղեղից սասակիլ հորդացած,  
 Ազմըկում եր խուլ ինչպես բարկացած  
 Մարդկային խոսուն ձայներ անհամար։  
 Թեպես և անխոսք — սակայն ինձ համար  
 Պարզորոշ եր միտքն այն խոսակցության,  
 Անլու աղմուկը, վեճն հավերժական,  
 Հարվածը համառ ժայռերի կույտին  
 Մեղմանում եր նա ու դարձյալ ուժին  
 Խաղաղ ձորի մեջ հանկարծ վորոտում։  
 Յեվ ահա վերև մառախլուս ոդում

Հավերըն յերգեցին Արևածագի  
 Յերկինքը շիկնեց։ Մի թեթև քամի  
 Նամ տերեները շարժեց ու գնաց  
 Ու ծաղիկները լընչեցին քնեած։  
 Նրանց պես որին գիմավորելու  
 Յես ել գլուխս բարձրացրի վերև...  
 Մըտիկ արի ցած ու չեմ թաղցընում,  
 Սարսափն ինձ պատեց. — անհատակ ու սկ  
 Անդունդի յերին եյի յես պառկած,  
 Վոռնում եր ներքև ջուրը փրփրած։  
 Այնտեղ ե տանում ժայռը իշնելով,  
 Բայց չարը մենակ իշավ նրանով,  
 Յերբվոր յերկնքի բարձրեց գահավեժ,  
 Կորավ ստորին են մութ վլհի մեջ։

## XI

«Ծաղկում եր շուրջը յեղեմն Արարչ։  
 Զըմարթ ու դալար զարդը կանաչի  
 Պահպանում եր զեռ արցունքն յերկնային։  
 Յեվ խողովները խաղողի վորթի  
 Ծառերի միջով զալարվում եյին  
 Պանած կանաչով քնքույշ սաղարթի։  
 Իսկ նրանց վրա ճոխ կախված եյին,  
 Ինչպես ականջի գինդեր թանկագին,  
 Լիք վողկույզները, և մերթ նրանց մոտ  
 Թըռչում եր հավքի յերամը յերկչոտ։  
 Ու նորից գետնին կըպա յես մին ել  
 Նորից սկըսա յես ականջ դընել  
 Այն ոտարութի թովիչ ձայներին.  
 Նրանք թփից թուփի ծըլվըլում եյին

Ու խոսում եյին կարծես միասին  
Յերկնքիշերկը դադունիքի մասին  
Այնակ բնության ձայնելը բոլոր  
Միացած եյին: Այն հանդիսավոր  
Փառաբանության յերգի ժամանակ  
Մարդու գոռ ձայնը չեր լովում մենակ:  
Ինչ վոր այն ժամեն զգում եյի յև,  
Անհետացել են մտքերս այն բոլոր,  
Բայց կուղենայի պատմել նրանց քեզ,  
Վոր գոռն մաքով ապրեմ նորից նոր:  
Այն առավոտը կամարն յերկնքի  
Այնքան եր հստակ, վոր հըրեղտակի  
Ճախրը սուր աչքը տեսնել կարող եր.  
Այնքան թափանցիկ ու այնքան խոր եր,  
Այնքան եր լեցուն մինչ կապուտակով,  
Վոր յես նըրա միջ հայացքով, հոգով  
Սուլվիցի, կորա, մինչև իր շոգով.  
Իմ ցնորքները կեսորը ցըրվեց,  
Ու ինձ ծարակը տանջել սկսեց:

## XII

«Այնժամ բռնելով ճկուն թփերից,  
Դեպի հեղեղատն անդունովի յեղից,  
Մի սալից մի սար փորքան ուժըս կար  
Սկըսա իջնել Յերբեմն մի քար  
Վոտներիս տակից պոկվերով հանկարծ,  
Գլորվում է ցած:  
Թռչում եր ներքե գորոդ հանելով,  
Ցետեցի ակոս, փոշի անելով  
Ու կուլ եր գնում ջրի ալիքին:

Յես կախված եյի — անդունովն իմ տակին  
Բայց ջահելությունն ուժով ե լինում,  
Մահվան յերկյուղը ինձ չեր վախեցնում  
Հենց իջա տակը այն սեպ-սեպ ժայռի,  
Յերեսիս փըչեց լեռնային ջրի  
Զով թարմությունը, և իսկույն ագահ  
Նըրա սառնորակ ալիքին ընկա:  
Հանկարծ մի շըշուկ վոտնաձայն թեթի...  
Իսկույն թագչելով թըփերի յետե,  
Ամբողջ բունված ակամա գողով,  
Յերկյուտ հայացքս վեր քաշած վախով  
Յես ականջ դընել սկսա ագահ,  
Յեզ մոտենալով հընչում եր ահա  
Մատաղ վրացունու ձայնը պատանի,  
Այնպես բնական, այնպես կենդանի,  
Այնպես քաղցր, աղատ, վոր կարծես թե նա  
Սիրելի մարդկանց անվան հընչյուններ  
Միայն կանչելու սովորած միներ:  
Այն մի հասարակ յերգ եր լեռնային,  
Խոր տպվեց սակայն իմ մտքի միջին,  
Յեզ իմ ականջին — հենց մութն ընկնում ե:  
Մի անտես, անհայտ վոզի յերգում ե:

## XIII

«Ասփորն ուղիղ բանած ուսին  
Նեղ շավիղով վըրացուհին  
Զուրն եր ՅԵՐԵՄՆԱԿԻ  
Քարեց, ԱՅՎՈՅՆՈՅ ՅԱՅՆՈՅ ՆԱ  
Միծ պարու իրեն վըրեւէ  
Այնուս աղքատ ԱՅՎՈՅՆՈՅ պարու աղահ,  
Ա. Մ. Ա ՄԱՆՈՒԿԻ ՊԱՐ

Թող հիշատակն այն վայրկենի  
Իսձ հետ, իմ մեջ մընա — մեռնի:

## XIV

«Հոգնած գիշերվա նեղություններից  
Ըսկա ստվերում: Շուտով սփոփիչ  
Քունը աչքերը փակեց ակամա  
Յել յես մյուս անգամ յերազում տեսա  
Զըքնադ պատկերը այն վըրացունու,  
Յել մի անսովոր, ոյսուրեկան թախիծ  
Ենուշիկ ճամկեց իմ սիրտը նորից:  
Ճիգ ելի անում, վոր մի շունչ քաշնմ,  
Հանկարծ արթնացա: Արդեն յերկնօքում  
Փայլում եր լուսինն, ու մենակ մի ամպ  
Սողում եր նրա յետեկց թագուն,  
Բաց արած իրեն գիրկն ազահությամբ.  
Կարծես թե իրեն վորսը լիներ են:  
Լուռ եր ու խավար աշխարք համորեն.  
Գագաթները միայն ձյունոտ սարերի,  
Ինչպես արծաթյա ծոպեր ահոելի,  
Պըսպղում եյին առաջիս — հեռվում,  
Ճեղեղատը խուլ ճողիպում ափերում:  
Մանոթ խրճիթում մերթ պայծառ վառվում  
Ու մերթ հանգչում եր աղոտ մի կրակ:  
Այնպես ե հանգչում գիշեր ժամանակ  
Պայծառ աստղիկը յերկնօքում փայլող:  
Յես ուզում եյի... բայց չեյի կարող  
Յես այնտեղ մտնել: Յես այն ժամանակ  
Հոգումս ունեյի լոկ մի նպատակ —  
Հասնել հայրենիք: ու համբերեցի

Շղարշի ծալքերն լետև ձըգած,  
Թեթևաքայլ զընում եր նաւ:  
Թեժ արկը, շոգն ամառվա  
Նրա դեմքն ու կուրծքն ալրելով  
Պատել եյին վոսկի ստվերով:  
Տապ եր շնչում դեմքը բոլոր,  
Յել աչքերի մութն այնքան խոր,  
Անքան սիրո գաղտնիքով լի,  
Վոր մտքերը փոթորկալի  
Շըփոթվեցին: Հիշում եմ խոր,  
Կըժի ձախնը, ջուրը լերբ վոր  
Մեջն եր թափում մեղմաքրքիջ,  
Ու սոսափունն... ուրիշ վոչինչ:  
Յերբ վոր ուշքի յեկա կըրկին,  
Ու յետ քաշվեց սրտիս արինն,  
Արդեն շատ եր նա հեռացած,  
Ու գնում եր թեթև, կամաց.  
Շիտակ իրեն բեռան տակին,  
Վորպես դաշտի շրքեղ բարդին...  
Միքիշ հեռու, սառը միգում,  
Վորպես ընկեր, ժայռի զըրկում  
Բուսել եյին յերկու տընակ.  
Հարթ կըտուրի վրայից մեկի  
Ծուխըն յելնում եր կապուտակ:  
Յես տեսնում եմ այժմ ել, ասես,  
Ինչպես նըրա դուռը բացվեց  
Ու կամացուկ փակվեց դարձյալ...  
— Դու, յես գիտեմ, չես հասկանալ  
Իմ տիրությունն, իմ վիշտն անհաս.  
Յել կը ցավեմ թե հասկանաս.

Քաղցի, ծարավի, վորքան կարացի:  
 Յել ահա անձայն ու յերկչոս ընկա  
     Յես ուղիղ ճամփա:  
 Բայց շատ չըքաշեց, անտառի խորքում  
 Սարերը դարձյալ աչքիցը ընկան,  
 Աւ ըսկսեցի կորցընել ճամփան:

## XXV

«Անզուսպ կատաղած յերբեմըն իզուր  
 Պոկ ելի տալիս յես հուսակըտուր  
 Իրար խըճընված բաղեղ ու մացառ,  
 Շուրջըս անտառ եր, անեզըր անտառ,  
 Հետղիետե խոր, խիտ ու ահոելի.  
 Յեվ բազմությունով սե սկ աչքերի  
 Գիշերվա մութը հետեւում եր ինձ  
 Ամեն մի թըփի, ճյուղի արանքից,  
 Գըլուխս սկսավ արդեն պըտըտել  
 Ծառեր բարձրացա, ուզեցի դիտել  
 Բայց մինչեւ անզամ յերկնի լեզերքում  
 Նույն ժանիքավոր անտառն եր ձգվում:  
 Այնժամ հուսահատ վայր ընկա կըրկին,  
 Հեկեկում եյի լալիս դառնադին  
 Ու հողի խոնավ կուրծքն ելի կրծում.  
 Արտասունքներըս վայր ելին հոսում  
 Նըրա յերեսին տաք ցողի նըման...  
 Բայց հոժար չեյի մարդոց ոդնութլան.  
 Խորթ եյին ընդմիշտ ինձ համար մարդիկ:  
 Յեվ յեթե հանկարծ կարճատե մի ճիչ  
 Ինձ դավաճաներ, գիտցիր, ծերունի,  
 Լեզուս արժատից պետք ե պոկեյի:

## XVI

«Մանուկ ժամանակ քո մի՞տն ե գալիս,  
 Յես չըգիտեյի յերբեք արտասվեր  
 Բայց այնտեղ չեյի ամաչում լալիս:  
 Ո՞վ եր տեսնելու — մըթին ծմակը,  
 Մին ել յերկնքում սահող լուսնյակը:  
 Լուսավորված նըրա լուսով,  
 Շածկված մամոռվ ու ավազով,  
 Խիտ ծըմակով շրջափակված  
 Բացատն եր իմ առջև ընկած:  
 Հանկարծ այնտեղ անցալ մի ստվեր,  
 Ու հըրեղեն յերկու կայծեր  
 Պըսպղացին... ապա թե այն  
 Մութ թավուտից ինչվոր գաղան  
 Մի վրայունով թռավ, պառկեց,  
 Ավազի հետ խաղալ սկսեց:  
 Այն անապատի մշտական տերը —  
 Հուժկու հովազն եր: Հում-հում վոսկորը  
 Կըծոտում եր նա, ուրախ մըրմուսի,  
 Յերբեմն արյունոտ հայացքը հառում  
 Ու փաղաքաբար պոչը շարժելով՝  
 Նայում լրացած լուսնյակի վրան,  
 Ու փայրում եր մազն արծաթի նման:  
 Հսկասում եյի յես մի ճյուղ բռնած  
 Կովի վայրկենին. ու սիրոս հանկարծ  
 Բորբոքվեց արյան, կովի ծարավով...  
 Հա, բոլորովին այլ ճանապարհով,  
 Այլ շավիղով եր ինձ բախտը տանում,  
 Բայց համոզված եմ, վոր մեր աշխարքում  
 Յես ել կըլինեյի քաջերի շարքում:

## XVII

«Հսպասում ելի՞ Արդեն գիշերվա  
Մըթնում թշնամու հոտն առել եր նա,  
Ու մոնչյունը յերկմը, սըրտահեծ,  
Վորպես հառաջանք հանկարծ տարածվեց...  
Ավազը թաթով կատաղած փորեց,  
Ծառս լեղավ, հետո փորբառ արեց,  
Ու մի ցատկելով սակավ եր մընում  
Խկուն ինձ մահի բաժին եր անում.  
Բայց հանդիպեց իմ հարվածին:  
Ծանըր ճուղը ինչպես կացին  
Ճեղքեց նորա ճակատը լայն...  
Նա հառաջեց մարդու նման  
Ու շուռ լեկավ: Սակայն նորից,  
Թեև նըրա խոր վերքերից  
Հոսում եր հորդ արյունն այնքան—  
Վառվեց կորիմ որհասսական:

## XVIII

«Ընկավ կրծքիս. բայց շտապով  
Նըրա կոկորդն յես կոխեցի,  
Եերեք անգամ պըտըտեցի  
Միակ զենքը... նա հառաջեց,  
Իրեն բոլոր ուժն հավաքեց,  
Ու մենք, ինչպես ոձեր, կըպած,  
Ընկերներից ամուր գըրկված  
Գըլորվեցինք, ու խավարում  
Գետնի վըրա եյինք կըռվում:  
Այն վայրկենին յես ել ելի

ինչպես հովագ չար, կատաղի.  
Յես վառվում ելի, ժնգժնդում իր պես.  
Յես ինքս ել ծնված լինելի կարծես  
Հովազների ու գալերի միջին,  
Թարմ անտառների հովանու տակին:  
Մարդկալին բարբառն, այնպես եր թվում,  
Մոռացել ելի, և հենց իմ կրծքում  
Այն սարսափելի կորհչն եր ծնվել  
Կարծես թե լեզուս ծնընդից ի վեր  
Ուրիշ ձայների անսովոր լիներ...  
Բայց իմ թշնամին սկսավ թուլանաւ  
Դես դեն լերերալ ու ծանր հևալ  
Վերջին անգամ հուալ տվավ ինձ,  
Կանգնած աչքերն սպառնալից  
Փալկտեցին, ապա հանգան  
Փակված քընով հավերժական:  
Բայց հաղթանակող թշնամու առջեւ  
Հըպարտ հանդիպեց նա իր որհասին,  
Ինչպես վաեր ե կովում հերոսին...

## XIX

«Իմ կրծքի վըրա տեսնում ես դեռ նոր  
Նըրա ճանկերի հետքերը խոր խոր,  
Զեն առողջացել նրանք տակավին,  
Դեռ չեն ծածկըվել, բայց հողի տակին  
Նորից կըբացվեն ու կը թարմանան,  
Ու կառողջացնի մահը հավիտյան...  
Մոռացել ելի յես այնժամ նրանց,  
Ու իմ մնացած ուժը հավաքած  
Գնում եյի միշտ թավուա անտառում...

Սակայն բաղդիս հետ զուր ելի կովում —  
Նա ծաղրում եր ինձ ու արհամարհում:

## XX

«Դուրս յեկա կրկին բերանն անտառի.  
Ոըը բացվեցավ, տըժդուխն աստղերի  
Բուլը չըքացավ նըրա շողերում:  
Էսկսավ ծըխալ առւլը հեռվում  
Ռւ մութ անտառը շըրշել արթնացած:  
Ներքն հովիտում հողմի հետ հանկարծ  
Մի ժըխոր անցուվ... վրա նստեցի.  
Բայց նա հողմի հետ լըռեց վերստին:  
Իմ չորս կողմերը յես աչքըս ածի.  
Կարծես այս տեղերն ինձ ծանոթ ելին:  
Սարսափելի յեր այս միտքն ինձ համար,  
Յեվ չելի ուղում հավատալ յերկար,  
Թե կրկին բանտս եմ յես վերադարձել,  
Թե այնքան որեր զուր եմ մտածել,  
Փափաշել գաղտնի միտքը նվիրական,  
Տառապել, տանջվել համբերել այնքան,  
Ռւ բոլորն ինչմէ, — վոր այս հասակում,  
Դեռ նոր բաց արած աչքըս աշխարջում,  
Թավ անտառներում շունչ ու կյանք առած,  
Ազատ աշխարքի, կյանքի սովորած,  
Ինձ հետ միասին տանեմ գերեզման  
Ալրող կարուաը սուրը հալրենիքիս,  
Խիստ նախատինքը խաբված հույսերիս  
Յեվ ամօթանքը ձեր կարեկցության...  
Սակայն տակալին կասկածներով լի  
Կարծում ելի թե՝ յերազում ելի,

Եերբ հանկարծակի խաղաղ ովի մեջ  
Զանդի ըստանջը հեռվից տարածուից.  
Ալսակը ինձ համար բոլորը պարզվեց...  
Ո՞, ճանաչեցի իսկուն յես նըրան.  
Շատ և փախցըրել նա իմ մանկական  
Կարու աչքերից վառ էրազներիս  
Թանդ տեսիլքները, — հարազատներիս,  
Ազատությունը վայրի դաշտերի,  
Յեվ նժույգները թեթև, կատաղի,  
Յեվ կախմները ժայռերի միջին,  
Ուր հաղթում ելի մենակ ամենքին...  
Անլաց, ուժապառ լըսում ելի յես:  
Սրտիս միջիցն եր զուրս գալի, ասես:  
Կարծես թե մեկը անընդհատ զարկով  
Զարկում եր կրծքիս ծանըր յերկաթով:  
Յեվ յես անորոշ այսմամ հասկացա,  
Թե այսուհետեւ դեպի հալրենիք  
Եերբեք ինձ համար ել ճամփա չը կա:

## XXI

«Հա, արժանի յեմ վիճակիս, հալրիկ.  
Հըզոր նժույգը ոտար դաշտերում  
Իր վատ հեծովըին վայր և զլորում,  
Հեռու աշխարքից դեպի հալրենիք  
Գտնում ե ուղիղ ու կրծատ ուղի...  
Ի՞նչ եմ նըրա մոտ: — Զուր և սիրսա լի  
Ալքան թախիծ, տենչ ու վափագ:  
Այս ջերմ և լոկ թուլ ու դատարկ,  
Ցորքի մի խաղ, խելքի խանգարում:  
Ինձ վրա բանտը իրեն կընիքը

Կամ թե մանկական թոթովը առվակի...  
 Հենց ոճն եր մենակ, վոր աշնան մարդի  
 Չորացած խոտը դես դեն շարժելով,  
 Դեղնավուն մեջքով փայլկտին տալով՝  
 Փիլուն ավազը ակոսում, տողում,  
 Զգույշ սողում եր, քնքալով խաղում,  
 Յեռակի վոլում, ող շինում ազին  
 Ուս մին ել, հանկարծ, կարծես թե շանթած  
 Իրեն նետում եր, թռչում սրբնթաց,  
 Թագչում հեռավոր թըփերի տակին...

## XXIII

«Ու վող յերկնքում մեղմ եր ու պալծառ:  
 Մըշուշի միջից հեռվում յերկու սար  
 Սկին ելին տալիս: Մեկի յետմից  
 Մեր մենաստանը ժանիքները ցից  
 Իրեն պարըսպով յերևում եր ինձ:  
 Կուրն ու Արագվան ներքեւ, հովիտում  
 Իրենց արծաթյա յերիզով պատում  
 Թարմ կըզգիների ըստորոտները,  
 Ու լվանալով շիշուն թըփերը,  
 Սուր հոսում ելին ընկած իրարու...  
 Նըանք ինձանից շատ ելին հեռու:  
 Ասի վեր կենամ — սակայն առաջիս  
 Ամեն բան արագ պտույտ եր գալիս.  
 Ասի թե կանչեմ — լեզու ցամաքած  
 Առանց հնչյուն եր, անշարժ, կարկամած...  
 Մեռնում ելի լես: Տանջում ել մահվան  
 Զառանցանքը ինձ: Այնպես եր թվում,  
 Թե խոր գետի թաց հատակում

Թողել և արդեն... Այսպես և լինում  
 Անլույս խավարում բուսած ծաղիկը. —  
 Քարերի միջին դալուկ ու մենակ,  
 Թերթիկները փակ, լերկար ժամանակ  
 Մընաց արևի շողերին զըվարթ:  
 Որեր անցկացան, ու բարի մի մարդ  
 Կարեկցությունից հանելով նըրան  
 Փոխեց մի պարտեղ, վարդին հարևան:  
 Ամենայն կողմից փարթամ ու շըքեղ  
 Կյանքի քաղցրություն շնչում եր այնտեղ...  
 Բայց ինչ դուքս յեկավ. հենց որը բացվեց,  
 Ու արշալուսի ցուքը տարածվեց —  
 Նըրա վառվուն շողերն այրեցին  
 Խավարչտին բանտում սովորած ծաղկին...

## XXII

«Ինձ ևս ալնպես, ինչպես և նըրան  
 Ալում եր տապը անողորմ որվան:  
 Իզուր ելի յես ծածկել աշխատում  
 Հոգնած զըլուխս չորացած խոտում.  
 Փուշ պսակի պես նրա տերեւը  
 Խճճվում եր իմ ճակտիս վերեւը,  
 Յերկիրն յերեսիս կըրակ եր շնչում,  
 Ու պըսպալով կայծերը որդում  
 Պաըտվում ելին, Յերնում եր շոգին  
 Սպիտակ ժայռերից: Աստծո աշխարքին  
 Կաշկանդել եր խուլ, գերեզմանական  
 Ծանըր մըրափը հուսահատության:  
 Գեթ լրամարգին ճռվողեր, խոսեր,  
 Կամ թե ճըպուռի ճըռուցը լավեր,

Պառկած ելի —ու իմ քոլոր  
 Շուրջը մուլլ խորհըրդավոր:  
 Յեվ, հագեցնելով ծարավս անհազուրդ,  
 Զըրի հոսանքը, սասցի նըման ցուրտ,  
 Խոխոջ հանելով կուրծքըս եր մանուռ...  
 Յես միայն քնելուց ելի վախենում —  
 Այնքան գյուրհեկան, այնքան եր քաղցըր...  
 Իսկ իմ վերելը, ինձանից բարձըր,  
 Խըռնվում ելին ալիքն ալիքին,  
 Արել նրանց բյուրեղի միջից  
 Լուսնից ել անուշ նշողում եր ինձ...  
 Ու խայտաճամուկ պարը ձկների  
 Մերթ մերթ խաղում եր այն լուսի տակին:  
 Յեվ հիշում եմ յես նրանցից մեկին.  
 Նա, ուրիշներից անուշ ավելի,  
 Փաղաքշում եր ինձ մտերիմ սիրով  
 Մեջքը ծածկըված փոսկլա թեփերով,  
 Խայտում եր գլխիս վերև, խլսուում,  
 Ու խորն եր այնքան, քնքույշ ու տրտում  
 Հայացքը նըրա կանաչ աչքերի...  
 Ու յես անկշտում հիացած ելի:  
 Արծաթահնչուն նըրա ձայնիկը  
 Ինձ զարմանալի բաներ եր պատմում,  
 Նա մեկ լուս եր, մեկ նորից յերդում:  
 Նա ասում եր.

— Իմ պատանի,  
 Այստեղ ինձ հետ կաց միասին.  
 Սառն ու հանգիստ միշտ կըլինի  
 Աղատ կանքը ջըրալին:

«Իմ քույրերին լևս կըկանչեմ,  
 Մենք, միասին պար բրոնած,  
 Կը ինդացնենք մուլլ դեմքըդ  
 Ու քո հոգին վաստակած:  
 Քնի, մահիճդ ահա վափուկ  
 Ու վերմակըդ թափանցիկ...  
 Կանցնեն տարելք, կանցնեն դարելք  
 Յերազներում գեղեցիկ:

«Ո՞, պատանի, սիրում եմ քեզ,  
 Ահա իմ վողջ գաղտնիքը,  
 Միրում — ջըրի ալիքի պես,  
 Միրում — ինչպես իմ կյանքը...»

«Ու յերկմը, յերկար, լիս լուս ելի.  
 Ու կարծես հնչուն ալիքը նըրի  
 Խայտում եր իրեն մըմունջը խորին  
 Են փոսկիթեփուկ ձըկան բառերին:  
 Այստեղ ինձ կորցրի: Աչքերըս մթնեց.  
 Զառանցանքն հատավ ու տեղի տվեց  
 Տկարությանը վաստակած մարմնիս...»

#### XXIV

«Այսպիս գտան ինձ ու վերցրին...  
 Մնացածն արդեն հալտնի յե քեզ:  
 Յես վերջացրի: Այժմ կուզես  
 Մի հավատար, այդ չեմ հարցնում,  
 Մի բան եմիայն ինձ տխրեցնում,

Վոր իմ դիակն այստեղ — հեռու,  
Իմ մալը հողում չի փըթելու,  
Ու ցավերիս վեպքը տըրտում  
Զեն պատմելու խուլ իրձիթում,  
Վոր մեկն ուշքով լսի ու լս  
Իմ տիբալի անվան վըրա:

## XXV

«Մնաս բարյավ, հալր... քո ձեռքը տուր ինձ,  
Տեսնում ես, իմը ինչպես այրվում ես.  
Այս բոցն, իմանաս, մանուկ որերից  
Իմ կրծքի տակին ծածկված մընում ե.  
Բայց հիմա արդեն ել սնունդ չըկա,  
Ու իրեն բանաը վողջ լափել ե նա:  
Վերադառնում ե Նրա մոտ կրկին,  
Վոր որինավոր կարգով ամենքին  
Տալիս ե տանջանք ու հանգստություն...  
Բայց լինչ եմ անում. թեկուզ դրախտում,  
Ամպերից վերեւ — են սուրբ աշխարքում  
Իմ հոգին իրեն հանգիստ ունենար...  
Ալս, միայն մի քանի վայրկենի համար,  
Մռայլ, վիթխարի են ժայռերի մեջ,  
Ուր անց եմ կացըել որերս մանկության,  
Կըտայի իս վողջ — դրախտ, հավիտյան...

## XXVI

Եկը վոր, ծերունի, մեռնելու լինեմ,  
Ու գիտեմ — յերկար չպախի ապրեմ. —  
Պատվեր տուր անժամ դու ինձ տանելու  
Մեր կանաչ այդին, ախտել, ուր յերկու

ծերմակ հակակի թփեր են ծաղկում...  
Խոտն ենքան խիտ ե նրանց արանքում,  
Ու անուշաբուլը թարմ ողը ալնպես,  
Այսպես թափանցիկ, այնպես վոսկեցող  
Տերեն արեկ տակին խաղացող...  
Դու հըրամալի ինձ ալնտեղ տանեն:  
Պայծառ ցերեկի փակով վոսկեղեն  
Վերջին անգամը կարբենամ գեթ լիս  
Կովկասն ախտեղից կերևա նուշնպես  
Կարելի լի հով զեփուռների հետ  
Ուզարկի նա ինձ վերջին հըրաժեշտ  
Են բարձունքներից հզոր, աննըվաճ...  
Ու իմ ականջին, որհասից առաջ  
Կընչի դարձալ հարազատ մի ձեն:  
Ու կըմտածեմ, թե ընկերըս ե են,  
Կամ թե յեղբարըս վրաս կորացած  
Զգուշ ձեռքերով դեմքիցս կամաց  
Մահվան սառնամած քրտինքն ե սրբում  
Ու մեր տան մասին կիսաձայն յերգում...  
Ու յես ալս մըտքով խաղաղ կըհանգչեմ,  
Ել չեմ գանգատվի վոչ վոքի ընդդեմ...»

1896

Հ. ԱՆԴԻ ՖԻՆԵԼԼՈ

ՀԱՅԱՎԱՐԻ ՅԵՐԳԸ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Յեթե հարցնեք, վորտեղից են  
ես լիգենդներն ու զրուցներն  
Անտառների անուշ բույրով,  
Հովհանների շաղ ու մուժով,  
Վիզվամների վոլոր ծուխով,  
Մեծ գևաների սահանքներով,  
Նրանց անվերջ վորոտումով  
Ու վայրենի արձագանքով,  
Ինչպես ամպրոպ սարերի մեջ,  
Յես ձեզ կասեմ, ձեզ կը պատմեմ:

Անտառներից, հովհաններից,  
Նորդպանդիալի մեծ լրճերից,  
Ոշիբուալի խոր աշխարհից,  
Դակոտների վայրի իբրից,  
Ճահիճներից, Ճախիճներից,  
Ռւր շուհ-շուհ-գան՝ արագիլ  
Կեր և փնտրում ձըլլուտներում,  
Կրկնում եմ յես ես զրուցներն  
Անուշ լերդիչ ու լերափիշտ  
Նավադահի ոլարզ լերգերով:  
Յեթե հարցնեք, Ռւր և գլուել  
Ես յերգերը նավադահան,

Եսքան վայրի ու քըմահաճ.  
Յես ձեզ կասեմ, ձեզ կը պատմեմ:  
— Թոչունների բըների մեջ,  
Զըրշունների խոռոչներում,  
Բիգոնների արոտներում,  
Արծիթների բնավայրում.

Ճահիճներում, Ճախիճներում,  
Մելամաղձիկ թափառելով,  
Յերգում ելին նրա համար  
Մանգը՝ բաղը, սաղը՝ վավան,  
Յեզ շուհ-շուհ-գան՝ արագիլը,  
Յեզ կըտցարը՝ չիթովելով,  
Վալը հավը՝ մուշկողաղան:

Յեթե դարձյալ հարցմունք անեք,  
Ո՞վ ե հապա նավադահան,  
Պատմի դու մեզ նըրա մասին.  
Ճեր հարցմունքին ես խոսքերով  
Կըտամ իսկոյցն յես պատասխան:  
— Թավազենթի պերճ հովհանում,  
Ճոլս մարդերի լըռության մեջ,  
Արծաթափալլ ջըրերի մոտ  
Ապրում եր վաղ նավադահան:  
Հընդիկ գյուղի շուրջը բոլոր  
Փըռվում ելին հանդեր, արտեր,  
Ու կանգնած եր հին ծըմակը,  
Հին ծըմակը սոճիների,  
Ամրան՝ կանաչ, սոսափելով,  
Զմրան՝ փալլուն ձերմակ ձյունով,  
Լիքը լերգով, հառաջանքով:

Հովիտն ի վար հոսում ելին  
Են ջրերը արծաթափայլ,  
Գալսանը՝ խիտ լեղեգնուտով,  
Ամրանն յերկար բարդու շարքով,  
Աշնանը՝ դորշ մեղի տակին,  
Զըմբան՝ սպիտակ ափերի մեջ:  
Ու ապրում եր լերգիչն ենտեղ,  
Թավաղենթի պերճ հովիտում,  
Ճոխ մարդերի լոռութլան մեջ:

Ենտեղ լերգեց նա ես լերգը,  
Անուշ լերգը Հայավաթի,  
Թե ինչպես նա ծնվեց, ապրեց,  
Ու ինչպես եր ճգնում, տանջվում,  
Քարոզում եր ու համոզում,  
Վոր լերջանիկ դարձնի մարդին,  
Վոր բարձրացնի ժողովրդին:

Ով սիրում ե բընությունը  
Ու մարգերում լույսն արևի,  
Սիրում ստվերն անտառների,  
Սիրում հովը տերեներում,  
Յեվ անձրւը, և փոթորիկ,  
Յեվ սահանքը մեծ գետերի,  
Յեվ կայծակը սարերի մեջ,  
Թափուտներում սոճիների,  
Նա կը լսի ես զըրուցը,  
Զքնաղ լերգը Հայավաթի:  
Ով սիրում ե ժողովրդի  
Լեգենդներն ու բալադները,  
Վորոնք, ինչպես հեռու ձախներ,

Կանչում են, վոր ականջ դնենք,  
Ու խոսում են պմրզ, մանկաբար,  
Վոր հազիվ ե մարդ վորոշում,  
Յերգ ե արդյոք թե պատմություն,  
Ականջ կանի նա հաճույքով  
Ես հնդկական հին զրուցին,  
Խաղաղ յերգին Հայավաթի:

Նա, ում սիրուը թարմ ե ու պարզ,  
Հավատում ե Աստծուն, բնության,  
Հավատում ե, վոր հավիտյան  
Մարդկալին ե սիրուը մարդու.  
Վոր վայրենի լանջի տակ ել  
Մի անմեկին կլանքի համար  
Կան բաղձանքներ ու ձգտումներ.  
Վոր խավարում խարխափելիս,  
Թուլլ ձեռքերը անոգնական,  
Հանդիպելով Աստծո աջին,  
Կլանք են առնում ու զորանում.  
Նա կը կարդա ես զըրուցը,  
Ես պարզ լերգը Հայավաթի:

Ով լերբեմըն իր շըրջակա  
Լուռ հանդերում թափառելիս  
Մի մոռացված շիրմի առջև  
Կանգ ե առնում, միտք ե անում  
Նրա կիսեղծ գըրի վրա,  
Վոր գրված ե պարզ, անարվեստ,  
Սակայն վորի ամեն խոսքը  
Լիքն ե կլանքի, հանդերձալի  
Անվերջ հուկսով ու թախիծով,

Նա կը կանգնի ու կը կարդա  
Ասոր հնության արձանագիր  
Ես հին յերգը Հայավաթի,

ԽԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԶԻԹՈՒԽԸ

I

Ու մեծ դաշտի լիբանց, վըրա,  
Կարմիր ժայռի բարձունքներին,  
Նա, հղորը, կյանքի տերը՝  
Գիտչի-Մանիտոն իջնելով,  
Կանգնեց շիտակ և ազգերին  
Ու ցեղերին կանչեց ի մի:  
Նրա վոտքի տեղից բըղիսից,  
Հոսեց մի գետ անդունդն ի վար,  
Առավոտան շողերի մեջ  
Շողողարով ու ծոր տալով  
Են իշկուդա — աստղի նման:  
Ու խոնարհեց Վոդին յերկըի,  
Աջով մարդում նրա համար  
Գծեց վոլոր մի ճանապարհ,  
— Գնահ, ասավ, ես լնթացքով:

Առա ալոկեց իրեն ձեռքով  
Թարահանքից մի կտոր քար,  
Շինեց կարմիր շիբիի զլուս  
Ու զարդարեց նկարներով:  
Գիտի ափից յեղեգն առավ  
Իր մութ կանաչ տերեներով  
Ու կոթ շինեց չիբխի համար,  
Լըցրեց ուռուտ չոր կեղեռվ:

Կարմիր ուռուտ չոր կեղեռվ:  
Շընչեց մոտիկ մեծ անտառին,  
Ու ճյուղերը տվավ իրար,  
Կըրակ հանեց, վառեց չիբուխն,  
Ու կանգնելով են սարերին  
Դիտչի-Մանիտոն՝ հըղորը  
Ծըխեց իրեն գալումետը,  
Իրեւ նշան վողջ ազգերին:

Ու ծուխն յելավ կամաց կամաց  
Առավոտան խաղաղ ոգում,  
Առաջ ինչպիս մըթին մի գիծ,  
Ճետո կապույտ, խիտ գոլորշի,  
Ապա ճերմակ ամպի նըման,  
Բարձրանալով, բարձրանալով,  
Մինչև հասավ վեր յերկընքին,  
Մինչև ցըրվեց վեր յերկընքում  
Ու փաթաթեց շուրջն ամեն բան:  
Թավաղենթի դաշտավալրից,  
Վառմինքի հովիտներից,  
Տուկալուզի ծըմակներից,  
Հեռու, հեռու ժեռ սարերից,  
Նորդանդիալի լըճափերից  
Ազգերն ամեն նըկատեցին,  
Տեսան հեռվում բարձրանում ե  
Խաղաղության չիբխի ծուխը:

Ու ազգերի մարգարեներն  
Ապին՝ տեսեք, են Պուկվանան  
Խաղաղության չիբխի ծուխն ե,  
Վոր թեքվում ե ուռենու պես,  
չ. Թումանյան—2

Շարժվում կանչող ձեռքի նման:  
 Մեծ, հեռավոր են նըշանով  
 Գիտչի-Մանիտոն՝ հըզորը,  
 Կոչ և անում մարտիկներին  
 Վողջ ազգերի ու ցեղերի:

Գետերն ի վեր հովիտներով  
 Յեկան, յեկան, հավաքվեցին  
 Մարտիկները վողջ ազգերի.  
 Դելավարներն ու մոհոկները,  
 Չոտկոսներն ու կամանչները,  
 Շոշոններն ու սելոտները,  
 Ոմոհոններն ու պոնները,  
 Մանդաններն ու դակոտները,  
 Հուրոններն ու ոջիբվեները:  
 Ճամբա յելան վողջ միասին  
 Խաղաղության չիրխի ծըխի:  
 Գալլումետի ծըխի վըրա  
 Դեպի սարերն են մեծ դաշտի,  
 Մեծ քարհանքի ժայռը կարմիր:

Ու զենքերով, զըրահներով,  
 Նախշուն, ինչպիս աշնան տերե,  
 Ինչպիս իբրկինք առավոտյան,  
 Ենտեղ, դաշտում, նրանք կանգնած  
 Նալում են խեթ իրար վրա,  
 Աչքերի մեջ ատելություն,  
 Մըրտերի մեջ դարեսը քեն,  
 Արյան ծարավ պատեհական:

Գիտչի-Մանիտոն՝ հըզորը,  
 Արարիչը մարդկան աղքի,  
 Նայեց նրանց կարեկցաբար:  
 Իր հայրական սիրով նայեց  
 Նրանց կըռվին ու պատքարին,  
 Ինչպիս իրեն անխելք ու խակ  
 Մանուկների կըռվի վըրա:

Ու տարածեց իր աջ ձեռքը  
 Մեղմի նրանց բլնույթը կոշտ,  
 Մեղմի տապը, ծարավն անհագ  
 Իրեն, աջի հովանու տակ:  
 Խոսեց խրոխտ ու վեճ ձայնով,  
 Են ջըրերի աղմուկի պես,  
 Վոր թնդում են խոր անդընդում,  
 Խըրատելով, նախատելով  
 Եսպիս խոսեց ազգերի հետ.

— Ո՞վ իմ վորդիք, իմ հետ վորդիք,  
 Ականջ դըրեք իմաստության,  
 Ականջ դըրեք խրատներին  
 Զեր արարիչ, ձեր ստեղծող  
 Հըզոր Վոգու շըրթունքներից,  
 Տըվի լեռ ձեզ ամեն բարիք.  
 Յերկիր տըվի՝ վորսի համար,  
 Գետեր տըվի՝ ձուկ բըռնելու,  
 Տըվի ձեզ արջ, տըվի բիզոն,  
 Տըվի լեղնիկ ու լեղջերու,  
 Տըվի ըսկուռ, տըվի ջըրշուն  
 Ու ճահճներ լի հավքերով.

Ինչու գոհ չեք դուք տակավին,  
Ինչու յեք դուք վորառմ իրար:

Հոգնել եմ յես ձեր վեճերից,  
Զեր արյունոտ կըոիվսերից,  
Հոգնել եմ ձեր՝ սպանության  
Ու վըրեժի աղոթքներից:  
Զեր ուժն ամբողջ սիրո մեջ ե,  
Զեր կորուստը՝ կըոիվսերի.  
Արդ ապրեցեք ալսունետե  
Խաղաղ, սիրով, յեղբոր նըման:

— Յես կուղարկեմ մի մարդարե,  
Փրկիչ համախ ձեր աղօերի:  
Նա կաշխատի, կապրի ձեզ հետ,  
Կառաջնորդի, կը քարոզի:  
Յեթե լըսեք նըրա խոսքին,  
Կը բազմանաք, կերջանկանաք,  
Իսկ թե թողնեք անուշադիր,  
Կը նըփազեք ու կը կորչեք:

— Մըտեք այժմ ես գետի մեջ  
Ու լըլացեք ձեր գեմքերից  
Կըովի վայրի նըկարները  
Ու արյունը ձեր մատների:  
Թաղեք հողում ձեր զենքերը,  
Առեք կարմիր քարը հանքից  
Ու շինեցեք կարմիր քարից  
Խաղաղության չիրինի գլուխ.  
Յեղեղն առեք յեղեղնուտից,

Զարդարեցեք վետուըներով,  
Ու ծըխեցեք ի միասին  
Խաղաղության չիրուխները,  
Ու ապրեցեք այսունետե  
Խաղաղ, սիրով, յեղբոր նըման:

Ու ծըգեցին մարտիկները  
Շապիկները այծեմենի,  
Զըրահաները ոազմական,  
Մըտան գետը արագանոս,  
Ու լըվացին յերեսներից  
Կովի վարի զարդերն ամեն:  
Տիրոջ վուքի տեղից հոսում,  
Չուրը վերից գալիս եր ջինջ,  
Իսկ նըրանցից ներքն պղտոր,  
Գնում եր մութն, ապականված,  
Արյունախառն ու կարմրագուն:

Ու գուրս յեկան մարտիկները  
Գետից հստակ ու մաքրված,  
Ու թաղեցին գետի ափին  
Իրենց զենքերը ոազմական.  
Գիտչ-Մանիտոն՝ հըզորը,  
Արարիչը ու Մեծ Վոգին  
Այն ժամանակ սիրով ժպտաց  
Անոգնական զավակներին:

Ու մարտիկներն ամենքը լուռ  
Առան քարը մեծ քարհանքից,  
Յեկ հըզեցին ու շինեցին

Զիբուխները խաղաղության  
Յեղեցն առան գետի ափից,  
Զարդարեցին փետուրներով,  
Ապա դարձավ ամեն մեկը  
Իրեն տունը, հայրենիքը,  
Մինչդեռ Վոգին, կյանքի տերը,  
Վերանալով ամպերի մեջ,  
Սուզից, լերկնի բաց դռներում,  
Խաղաղության չիրխի ծըխի՝  
Պուկվանայի ամպով պատաժ,  
Անհետացավ նրանց աչքից:

1907

## ՄՈՒՐՈՄՑԻ ԻԼԻԱՆ ԿՐՎՈՒՄ Ե ՎԼԱՇԻՄԻՐ ԻՇԽԱՆԻ ՀԵՏ

(ՌՈՒՍԱՑ ԵՅԼԻՆԱ-ՆԵՐԻՑ)

ԸՆ ԱՎԵՆԱՐԻՈՒՄ

Գընում ե ծերուկն արձակ դաշտերով,  
Գընում ե ծերուկն լերկար ժամանակ,  
Մաշվել են հագի շորերը նախշուն,  
Հատել ե արդեն իր գանձը վոսկի,  
Ու իլիան ինքնին խոսում ե եսպես.  
— «Յեղել եմ հիմի ամբողջ լիտվայում,  
Յեղել եմ հիմի վողջ որդաներում,  
Մենակ կիևում չեմ լեղել վաղոց:  
Կիկ գընամ մի, գընամ մի տեսնեմ  
Ինչ ե կատարվում ենտեղ — կիևում:  
Հասնում ե իլիան կիկ քաղաքը մալք.  
Քեֆ-խնջուլք ունի իշխան Վլադիմիրը.  
Սեղան են բազմած հըգոր հըսկաներ  
Ու պայազատներ մինչև լերեսուն:  
Մըտնում ե ծերուկն ապարանքը ներս,  
Կանգնում ե, կենում սրահի շեմքին,  
Խաչ քաշում դեմքին, ինչպես որենքն ե,  
Վողջուն ե տալիս ընդունված կարգով  
Արև իշխանին ու տիկնոջն ել ջոկ:  
— «Ապրած կենաս, տեր, իշխան Վլադիմիր,  
Հաց ու ջուր կը տամս լեկվոր քաշերին:  
Քեզ ուղիղ սրտով լեկել եմ ծառա.  
Զեմ վախում դաշտում հաղար թաթարից,

Զեմ վախում, թեկուղ մկուս հաղարն ել դա,  
 Զեմ փախչիլ թող դա յերբորդ հաղարն ել,  
 Ու ոգնության ել հարկավոր չեն ինձ  
 Յերեսուն ագռավն իրենց ճռւտերով:»  
 Ով եր — չիմացավ իշխանը հյուրին:  
 — «Ուսկի՞ց ես, ով քաջ, ի՞նչ ազդ ու տակից.  
 Քեզ ի՞նչ անունով կանչենք, մեծարենք,  
 Կամ ի՞նչ հալրական կոչումով հարգենք:»  
 — Նիկիտան եմ յես Զառլեշանին:  
 — «Ո՛վ, դու Նիկիտա Զառլեշանին,  
 Յեկ, նըստի, մեզ հետ հաց անուշ արա,  
 Մի տեղ կա դատարկ ենտեղ, ներքեռում,  
 Սեղանի ծերին, բազմոցի վերջին.  
 Բըռնած են ուրիշ տեղերը բոլոր:»  
 Ու, կըսներն ընկած, մարդիկն իշխանի  
 Տարան իլլային ծերը ներքել.  
 Նըստեցրին ենտեղ՝ ներքել ծերին:  
 Ու եսպես խոսեց իլրան ներքելից.  
 — Ու դու Վաղիմիր, մալր կինի տեր,  
 Վակել չի ուժին, վոչ աստիճանին  
 Տեղն ու պատրվը, վոր տալիս ես դու.  
 Ինքը նըստում ես ագռավների հետ,  
 Ինձ տեղ ես տալի ճռւտերի կողքին:  
 Ասավ, կամեցավ տեղը դըրըստի —  
 Զարդոտեց շուրջը կաղնի բազմոցներ,  
 Վոլորեց բիրերն ամբողջ յերկաթի,  
 Սեղմեց հյուրերին անկունը վերին,  
 Դուր չեկավ ես բանն Արև իշխանին.  
 Տեղիցը առուղի յելավ նա վոտի,  
 Մընեց, աշունքվա գիշերի նըման,

Մըռնչաց, ինչպես կատաղի գաղան:  
 — Ի՞նչպես, Նիկիտա Զառլեշանին,  
 Խառնես տեղերը դու իմ սահմանած,  
 Ծըռես բիրերը համայն յերկաթի...  
 Մեն մի հըսկայի արանքումը յես  
 Բիրեր եմ զարկել ամուր յերկաթի,  
 Վոր իւլնջուկներին, վորքան ել խըմեն,  
 Վորքան ել հարբեն, չը դիպչեն իրար:  
 ՀԵ դուք, մեծազոր ըսուս հըսկաներ,  
 Լովմծ ե վոր ձեզ, եղ հըսկաներիդ  
 Ագռավներ կանչի մինը ու ճռւտեր:  
 Դուրս յեկեք ձեզնից յերեք լավերըդ,  
 Դուրս շպլըսեցեք — սրահից փողոց:  
 Դուրս յեկան ընտիր յերեք հըսկաներ,  
 Սկսան Նիկիտին քաշել, քաշըըշել,  
 Սկսան Նիկիտին հըրել, հըմըշտկել.  
 Կանգնած ե Նիկիտն ու ժաժ չի գալի,  
 Չի շարժվում նույն իսկ գըլխարկը գըլխին:  
 — Թե կուզես, իշխան, դու զվարձանաս,  
 Թող գան սըրանց հետ յերեք հըսկա յել,  
 Դուրս յեկան ուրիշ յերեք հըսկա յել,  
 Սկսան Նիկիտին քաշել, քաշըըշել,  
 Սկսան Նիկիտին հըրել, հըմըշտկել.  
 Կանգնած ե Նիկիտն ու ժաժ չի գալի,  
 Չի շարժվում նույն իսկ գըլխարկը գըլխին:  
 — Թե կուզես, իշխան, դու զվարձանաս,  
 Թող դուրս գան գոնե յերեք հըսկա յել:  
 Դուրս յեկան յերրորդ յերեք հըսկան ել,  
 Բան չը կարացին անեն Նիկիտին:  
 Ու եսպես խոսեց Նիկիտը ալնժամ,

— Իշխան Վլադիմիր, մայր կիսի տեր,  
Ախորժակ ունիս անզուշտ խընդալու.  
Համեցեք, հիմի մըտիկ արա ինձ  
Ու ախորժակըդ կանցնի խընդալու:  
Ու Նիկիտը ինքը սկսավ խընդալ  
Ըսկըսավ սեղմէլ, զարկել, տըրորել  
Ուժեղ ու հզոր են հըսկաներին:  
Սողում են սրահում հըսկաներն ամեն,  
Զի կարում կանգնի վոչ մինը վոտի:  
Դուրս յեկավ Նիկիտն ապա սրահից,  
Դըռները զարկեց՝ շըջանակն ընկավ,  
Դարպասը դարկեց՝ սյուները թըռան,  
Զարդ-փշուր յեղան ճաղերը քաշած:  
Իշխանը մըտավ յետել վեչի,  
Սամուր մուշտակը քաշեց իր գլխին.  
— Վայ, կամաց, տղեք, ժամ չըգաք տեղից,  
Զը լսի Նիկիտ Զառլեշանին,  
Թէ չե յետ կը գա ջարդ-փշուր կանի,  
Վոչ մհծ կը թողնի, վոչ փոքը մեղնից,  
Ժառանդ չի թողնիլ ինձ՝ Վլադիմիրիս...»  
Դուրս յեկավ իլիան դարպասն ընդարձակ  
Ու լարեց ճայթուն իր աղեղը զիւ  
Սուր, մըխած նետը դըրավ աղեղում,  
Եսպես ինքնիրեն խոսեց նետի հետ.  
— «Սըլացիր, իմ նետ, տանիքը վոսկի,  
Վեր բեր վոսկեղոծ գըմբեթները ցած:»  
Ընկան վոսկեղոծ գըմբեթները ցած,  
Ու կանչեց իլիան կոկորդովը մին.  
— «Ճեյ, դուք կարակի մերկ ու տըկլորներ,  
Ճեյ, կամավորներ Արև իշխանի,

Վազեցեք, յեկեք դարպասն իշխանի,  
Առեք վոսկեղոծ գըմբեթները թանգ,  
Կըրեցեք, տարեք կարակն արքունի,  
Արադ իւըմեցեք ենտեղ կուշտ ու պինդ:»  
Վազեցին, յեկան տըկլորներն ամեն,  
Կամավորները Արև իշխանի,  
Տարան, կըրեցին, գըմբեթներն վոսկի.  
— «Ո՞վ դու մեր պաշտպան, մեր ծնող, մեր  
հայր...»

Ու իլիայի հետ յելան, գընացին,  
Խըմեցին բոլոր գըմբեթներն վոսկի,  
Խըմեցին մինչև վերջինը միասին:  
Ու յերկուող ընկավ սիրոները եստեղ.  
Ի՞նչ կանի մեղ հետ իշխանը հիմի,  
Ի՞նչ պատիժ կը տա, ով գիտի, հիմի,  
Խըմեցինք նըրա գըմբեթները վողչ:  
Ու իլիան եսպես խոսեց նըրանց հետ.  
— «Խըմեք, տըկլորներս, դուք մի վախենաք,  
Եսս եմ վաղմանից իշխան կիսում,  
Իսկ դուք ամենից մեծ պիտի լինիք:»  
Անցավ յերկյուղը, սկըսան խըմել,  
Տերից սկըսան կյանք խընդրել քաջին:  
Իսկ իշխանական խընջույքի վըրա  
Գընաց համբավը Արև իշխանին.  
— «Ո՞վ Արև իշխան, մայր կիսի տեր,  
Զես ասիլ՝ Նիկիտ Զառլեշանին  
Քու ես հարկերից, վոսկի հարկերից,  
Զըրեց վոսկեղոծ գըմբեթները ցած,  
Կանչեց կարակի վողջ տըկլորներին,  
Խըմեց նըրանց հետ գըմբեթներն վոսկի:»

Նըստած եր ենտեղ խընջույքի միջին  
Զահիլ Դոբրինիա Նիկոտիչ հըսկան,  
Եսպես ասավ նա Արև իշխանին.  
— «Իշխան Վլադիմիր, մեր կարմիր Արև,  
Նիկոտան չի նա Զառլեշանին,  
Այլ իմ խաչախպերն — Իլիան Մուրոմից»:  
Ասավ՝ իշխանը մտքի տունն ընկավ,  
Իր հետ անվանի ազատներն ամեն  
Յեղ հըսկաները ուժեղ ու հըզոր,  
Թե ինչպես անի — հաշտվի ծերի հետ:  
— «Միտք արեք, տըղեք, միտք արեք մի լավ,  
Միտք արեք, տղեք, խորը միտք արեք,  
Խելք խելքի տվեք մի հընալ գըտեք,  
Ո՞ւմ զըրկենք արդյոք ծերի յետելից,  
Վոր կանչի նըրան հարդինքի սեղան:  
Յես ինքս գընամ — չեմ ուզում գընամ,  
Ապրակսին զըրկեմ — վայել չի նըրան»:  
Ամենքը եստեղ մըտքի մեջ ընկան.  
— «Ո՞ւմ զըրկենք արդյոք ծերի յետելից...  
Յեկ զըրկենք գընա ջահիլ Դոբրինիան,  
Չե վոր իլիալի խաչախպերն ե՞նա.  
Նըրան կը լըսի իլիան՝ թե լըսի»:  
Սեղանը անցավ Վլադիմիր իշխանն,  
Յեկավ ու կանգնեց Դոբրինիալի գեմ  
Ու եսպես խոսեց Դոբրինիալի հետ:  
— Արի, լել, կարիճ, ջահիլ Դոբրինիա,  
Ծերուկ Մուրոմցու մոտ գընա մեղնից,  
Յերկիրը պագիր, խոնարի վողջունիր,  
Խոնարհիր մինչև հատակն աղլուսի,  
Խոնարհիր մինչև են գետինը ցած

Ու եսպես ասա նըրան մեր կողմից.  
— «Ուղարկել ե ինձ Վլադիմիր իշխանն  
Ու մայր տիկինը՝ Ապրակսիան իր հետ,  
Խընդրում են, վոր գաս ուրախ հարդինքի,  
Նա չի ճանաչել քեզ, կըտիճ քաջիդ,  
Նըստեցրել ե ցած, ներքելի ծերին:  
Խընդրում ե հիմի, լիասիրտ խընդրում,  
Խընդրում լիասիրտ ու մեծ ցընծությամբ.  
Խընդրում ե մոռնաս ինչ անց ե կացել:  
Գընում ե ահա ջահիլ Դոբրինիան,  
Գընում ե ճամբով ու միտք ե անում...  
— «Արդյոք վաղաժամ մահիս չեմ գնում...  
Բայց թե չը լըսեմ Արև իշխանին  
Փորձանք ե գալու անշուշտ նըրանից»:  
Ու գընում ե նա կաբակն արքունի,  
Մըտնում ե ահա կաբակն արքունի,  
Նըստած ե ենտեղ ծերուկ Մուրոմցին,  
Խըմում, քեզ անում տըկորների հետ:  
Ու միտք ե անում ջահիլ Դոբրինիան,  
Վոր կողմից արդյոք նըրան մոտենա.  
— Առջեկց գընամ՝ դուր չը գամ գուցե.  
Լավ ե թիկունքի կողմից մոտենամ:  
Յեկավ, մոտեցալ թիկունքի կողմից,  
Բըռնեց իլիալի ուժեղ ուսերից  
Ու եսպես մեղմով խոսեց նըրա հետ:  
— «Ո՞վ իմ խաչախպեր, իմ ախպերացու,  
Ո՞վ դու իմ ախպեր, ծերուկ Մուրոմցի,  
Քեզ պահի առժամ ձեռները ճերմակ,  
Բըռնի ու զըսպի սիրալդ կըրակու.  
Չե վոր բանքերին չեն կապում, կախում».

Մենք ել հո մեր մեջ ուխտ ունենք արած,  
 Ուխտ ունենք արած մեծ ու ահավոր,  
 Վոր փոքր ախպերը լըսի իր մեծին,  
 Մեծն ել իր փոքրին ականջ անի միշտ,  
 Ու եսպես կանգնենք մեկ մեկի համար:  
 Դեսպան և զըրկել քեզ մոտ ինձ եսոր  
 Վըլադիմիր իշխանն իրեն տիկնոջ հետ,  
 Քեզ, հզզոր քաջեղ նա չի ճանաչել,  
 Նըստեցրել ե ցած, ներքեի ծերին:  
 Խընդրում ե հիմի նա քեզ ցընծությամբ,  
 Խընդրում լիասիրտ մեծ խըրախճանի,  
 Թողնես, ասում ե, ինչ անց ե կացել:  
 Յետ ե շուռ գալիս իլելկոն եստեղ.  
 — «Հեյ դու; Դոբրինիա ջանել նիկլտիչ,  
 Քու բախտը բանեց՝ յետեկց յեկար,  
 Թե չե առջեկց գայիր, Դոբրինիա,  
 Հող ու մոխիրըդ քամուն պիտ տայի:  
 Հիմի, ախպերս, ձեռ չեմ տալի քեզ,  
 Կարգն ու որենքը անցնել չի լինիլ:  
 Յետ դարձի, ասա Արև իշխանին,  
 Թող վոր ինձ համար, ինձ, քաջիս համար  
 Արձակի սաստիկ, սաստիկ հըրաման  
 Ամբողջ կիւին, ես մայր քաղաքին  
 Յեկ Զերնիգովին նույնպես սըրա հետ,  
 Վոր արքունական կաբակները վողջ  
 Բացվեն յերեք որ ու յերեք գիշեր,  
 Ժողովուրդն ամեն գա արադ խըմի,  
 Ով չի կամենալ վոր արադ խըմի,  
 Թող նա գարեջուր խըմի հարբեցնող,  
 Ով վոր չի ուղիւ գարեջուր խըմի,

Թող նա մեղբաջուր խըմի քաղցրահամ,  
 Վոր վողջ իմանան, կիւ և մըտել  
 Մուլոմցի ծերուկ Իլիան իվանովիչ:  
 Ինձ համար ել թող՝ ես քաջիս համար  
 Սեղան բաց անի ճոխ մեծարանքի.  
 Իսկ թե չի անիլ ինչ ասում եմ յես,  
 Կիսում կիշխի մինչև լուս միայն:»  
 Ու արագ արագ վաղեց Դոբրինիան,  
 Վաղեց Վլադիմիր անուշ իշխանին,  
 Պատմեց Իլիալի պատվերը նրան:  
 Հենց լըսեց պատվերն իշխան Վլադիմիրը,  
 Իսկումն, անհապաղ սաստիկ ու սաստիկ  
 Գըրեց բովանդակ կիւ քաղաքին,  
 Ալլե Զերնիգով հանեց հըրաման,  
 Թե վողջ յերեք որ ու յերեք գիշեր  
 Բաց պետք ե լինի կաբակն արքունի,  
 Գա, արադ խըմի ժողովուրդն ամեն,  
 Խըմի, քեզ անի անվարձ, անվլճար,  
 Վոր վողջ իմանան կիւ և մըտել  
 Մուլոմցի ծերուկ Իլիան իվանովիչ:  
 Ու ինքը բացեց հարգինքի սեղան,  
 Կանչեց, հավաքեց իշխան ու բոլար,  
 Ռուսաց բոլոր մեծ հըսկաներին,  
 Ալլե քաջարի կանանց դյուցազուն,  
 Բայց մարդ չի գնում կաբակն արքունի,  
 Ամենքն իշխանի պալատն են վազում,  
 Վոչ կեր ու խումի, վոչ վոսկու համար,  
 Վազում են տեսնեն անվեհեր քաջին,  
 Տեսնեն Մուլոմցի են ծեր Իլիային:  
 Հավաքվում են վողջ գարպասն իշխանի

Սըտնում են կամաց ապարանքը ներս։  
 Ու ծեր Մուբոմցին դալիս ե ահա,  
 Գալիս՝ կարակի տըկլորների հետ,  
 Գալիս ե, մըտնում սըրահը պայծառ,  
 Անչ հանում դեմքին, ինչպես որենքն ե,  
 Վողջուն ե տալիս ընդունված կարգով,  
 Յերկըրպագում ե չորս կողմը խոնարհ,  
 Արև իշխանին ու տիկնոջն ել ջոկ։  
 Վերկացալ իսկուն իշխանը առուզգ,  
 Առավ իլիակի ձերմակ ձեռներից,  
 Համբուրեց նըրա շըրթունքը շաքար,  
 Ապա թե եսպես խոսեց շողոմքոր։  
 — «Ով դու ծերունի, իլիա Մուբոմցի,  
 Ճած իեղավ թեպետ քու տեղն ամենից  
 Աժըլմ ամենից վերև կը լինի։  
 Հետ, դուք ծառաներ իմ հավատարիմ,  
 Տարեք ձերունուն բարձըր ամենից։»  
 Բայց նա չը նըստեց ամենից վերև,  
 Դընաց ու նըստեց մեջ տեղն ամենի,  
 Հետը նստեցրեց մերկ տըկլորներին  
 Ու եսպես դարձավ Արև իշխանին։  
 — «Ով դու Վլադիմիր, մայր կիկի տեր,  
 Լավ ես իմացել՝ ում դըրկես ինձ մոտ.  
 Զըլներ Դոբրինիան՝ իմ ախպերացուն,  
 Զելի լըսելու եստեղ վոչվոքի,  
 Ու մըտքումս արդեն դըրել եյի յես,  
 Լարել ես ճամթուն իմ աղեղը զիր  
 Արձակել դեպի սըրահը շքեղ,  
 Ապանել և քեզ, իշխան Վլադիմիր,  
 Ցեղ քու տիկնոջը՝ քու Ապրակսիալին։

Բայց ես անդամը Աստված քեղ ների  
 Քու եղ հանցանքը, եղ հանցանքը մեծ։»  
 Եստեղ անուշներ բերին հյուրերին,  
 Քաղցըր մեղրաջուր խըմիչքներ բերին,  
 Բերին ամենին դըրին մի մի թաս  
 Ու եսպես խոսեց Իլիան իշխանին.  
 — Ա՛յ դու Վլադիմիր, մայր կիկի տեր,  
 Մըրանհվ ես դու պատվում հյուրերիս,  
 Մըրանհվ ես դու հարգանք ցուց տալի.  
 Ես արկլուներին միայն մի մի թաս...  
 Դուր չեկալ ես խոսքն Արև իշխանին,  
 Եսպես ձերունուն տըվավ պատասխան։  
 — Ամենքի համար խոր նըկուղներում  
 Արագ ունեմ իս ինչքան կամենան.  
 Մարգը մի տակառ քառսուն չափանոց։  
 Թե հերիք չսնի՝ ինչ վոր կա եստեղ,  
 Թող իջնեն իրենք նկուղներն իմ խոր։  
 — «Ա՛յ դու Վլադիմիր, իշխան կիկի,  
 Եղպէս են պատվում քեղ մոտ հյուրերին,  
 Եղպէս են քեղ մոտ հարգում քաջերին,  
 Վոր իրենք գըտնեն ուտեստ ու խըմիչք...  
 Տեսնում եմ տանտերն իս եմ լինելու։»  
 Ասավ ձերունին ու վոտքի լելավ,  
 Ել հարցմունք չարավ նըկուղի ճամբեն,  
 Ել նըկուղների բանալիք չուզեց.  
 Թափ իջավ դեպի նըկուղները խոր,  
 Դըռները արավ վողջ կըրընկահան,  
 Պոկեց կողպեքներն առանց բանալի,  
 Ներս մըտավ ինքը նկուղներն են խոր,  
 Առած մի տակառն ես մի կըռնատակ

Ու մյուս տակառը մեկել կըոնատակ,  
Յերբորդք վոտով գըլորում ե դուրս.  
Ու դուրս գըլորեց դարպասն իշխանի,  
Դոռաց ու կանչեց կոկորդովը մին.  
— «Հե՞ դուք կարակի մերկ ու տըկլորներ,  
Դուրս յեկեք եստեղ — դարպասն իշխանի,  
Յեկեք ամենքիդ արադ խըմեցնեմ:»  
Ու իջավ կըրկին նըկուզները ցած:  
Զը տարավ իշխանն ու թունդ յելավ խիստ,  
Վորոտաց ուժգին իր հընչուն ձենով.  
— «Հե՞ հավատարիմ դուք իմ ծառաներ,  
Շնուտ, յեկեք, համեք արագ ու արագ.  
Արագ ու արագ, ձեպով, հապձեպով,  
Վեր գըրեք քաջին խորունկ նըկուզում,  
Շուրջը քաշեցեք յերկաթի ցանցով,  
Կաղնի կոճղերով կապեցեք չորս դին,  
Թաղեցեք դեղին ավազի տակին,  
Սովամահ արեք խորունկ նըկուզում:  
Վաղեցին, հասան ծառաներն արագ,  
Արագ ու արագ, ձեպով, հապձեպով,  
Վեր գըրին ծերին խորունկ նըկուզում,  
Շուրջը քաշեցին յերկաթի ցանցով,  
Կաղնի կոճղերով կապեցին չորս դին,  
Թաղեցին դեղին ավազի տակին:  
Ու ցավ դառավլ ես մյուս հըսկաներին,  
Վեր կացան կիսատ քեֆի սեղանից,  
Յելան, դուրս յեկան դարպասն ընդարձակ,  
Իրենց ամենի ձիանքը հեծան,  
Դես դեն ցըլվեցին են արձակ դաշտում,  
Են լին ու ազատ տարածութեան մեջ.

— «Ել չենք մընալ մենք եստեղ — Կիւռում,  
Ել չենք ծառալիլ Արև իշխանին:»  
Ու ել Վլադիմիր իշխանի մոտին  
Նըսկա չը մընաց Կիւ են որից:

1908

ՍՎՅԱՏԱԳՈՐԸ<sup>\*</sup>)

(ՌՈՒՍԱՑ ԵՎԼԻՆԱ-ՆԵՐԻՑ)

Են սեպ սարերում, են սուրբ սարերում  
Նըստած եր հըսկան — Սվյատագորը մեծ,  
Զեր գալի ռուսաց հողը սըրբազան,  
Զեր կարում տանի գետինը նրան,  
Ուզեց մի անգամ սիրտը հըսկալի  
Ժուռ դա մի ազատ լայնարձակ դաշտում.  
Թամբեց նըմբուզը իր հըսկալական,  
Ժեռուտ կողմերով յելավ ճանապարհ:  
Ճըխաց լանջի տակ սիրտը ալրական,  
Խաղս առավ ուժը յերակների մեջ,  
Ու դուրս ե հորդում ասես խաղալով:  
Նեղվում ե սակայն հըսկան են ուժից,  
Նեղվում ե ինչպես մի ծանըը բեռից,  
Ուրիշն ել չըկա, վոր հետը չափվի:  
Ու ձգում ե վեր մըկունդն իր պողպատ,  
Ամպերից վերև — աչքից կորցընում,  
Բըռնում ե կըրկին ճերմակ ճեռներով.  
Ու խոսում ե նա ինքնիրեն եսպես.  
— Յեթի գըտնելի յես ուժը հողի —  
Ող կամրացնելի յերկնի կամարից,  
Ողից յերկաթի շըղթա կանելի,

\* ) Սվյատագորը ռուսաց ներում ավագ հսկաներից մինն  
ե, ին կոպիտ ուժն ե, վոր թափառական շըշանն ե ներկայացնում,  
իսկ Միկուլա Սեպանինովը (շինական) են հսկա յերկադորձն  
ե, վոր համարվում ե նստակյաց գեղջուկ աշխարհի նախահայրը:  
Սըս յերեալով Սվյատագորը տեղի յետը ու մեռնում:

Յած կըքաշելի յերկինքը ներքեւ,  
Յերկիրն ել տեղից յես շուռ կըտափի,  
Վող կը խառնելի — յերկինք ու յերկիր:»  
Եստեղ նկատեց, վոր դուրան դաշտում  
Գընում ե հետի մի այլ աժդահա,  
Ու են աժդահի ուսովը ձըգած

Կա ճամբորդական մի փոքրիկ խուրջին:  
Յեթե քըշում ե նըմբուզն ամեհի,  
Բաց թողնում ձիու թափովը ամբողջ,  
Գնում ե հեռու ճամբորդ աժդահան:  
Ու չի հասնում ձին իր հըսկալական:  
Թե մեղմ ե քըշում ու դանդաղ քայլքով,  
իր տեղն ե հըսկան, չի շարժվում ասես:  
Ու դուաց եսպես Սվյատագորը մեծ.

— Հեյ դու անցալոր, անծանոթ կըտրիձ,  
Կաց, կանգնի տեղը մի առժամանակ:  
Թե քըշում եմ յես նըմբուզն ամեհի,  
Բաց թողնում ձիու թափովը իր ամբողջ,  
Գնում ես հեռու քո ճանապարհին:  
Ու չի հասնում ձին իմ հըսկալական.

Թե մեղմ եմ քըշում ու դանդաղ քայլքով,  
Քո տեղն ես դու միշտ, չես շարժվում ասես:  
Կանգնեց իր ճամբին անցվորն անծանոթ,  
Վեր դըրավ գետնին ուժեղ ուսերից  
իր ճամբորդական խուրջինը փոքրիկ:  
Ու մոտ քշեց ձին Սվյատագորը մեծ.

— Ասա մի տեսնեմ, դու քաջ տըղամարդ.  
Ի՞նչ ե քո բեռը խուրջինիդ միջին:  
Ու ճամբորդն եսպես տըլվավ պատասխան:  
— Ով դու փառապանծ հսկա դէուցագորն,

Փորձ փորձի մի առ իմ բեռը չընչին,  
 Վեր առ, թե կարաս, հըզոր ուսերիդ  
 Ու ենպես քըշի դաշտը լայնարձակ:  
 Պատասխան տվավ անցորդն անծանոթ,  
 Ու ձիուց իջավ Սվյատագորը մեծ:  
 Առաջ մի մատոլ ուզեց վեր քաշի —  
 Չը շարժվեց տեղից խուրջինն են փոքրիկ:  
 Ապա մի ձեռքով բռնեց աժդահի —  
 Կըրկին չը շարժվեց խուրջինն իր տեղից,  
 Ապա թե հասավ վողջ ուժովն իր մեծ,  
 Դեմ տըվավ ձերմակ կուրծքը հըսկավի  
 Ուսի են չնչին, փոքրիկ խուրջինին.  
 Բըռնեց ահավոր ուժովն իր ամբողջ —  
 Մինչև ծընկները գընաց հողի մեջ,  
 Արյունը կաթեց ձերմակ յերեսից,  
 Իր տեղն ե սական խուրջինը կըրկին:  
 Ու ենպես խոսեց հըսկան զարմացած.  
 — Շատ եմ ման յեկել աշխարքումը լիս —  
 Եսպես հըրաշքի գեռ չեմ հանդիպել,  
 Եսպես մի տեսիլք չեմ տեսել յերբեք,  
 Չեմ տեսել ես բեռն իմ ծնած որից:  
 Ուժ ունիմ եսքան — ուժը չի պատում.  
 Ի՞նչ կա քո փոքրիկ խուրջինի միջին,  
 Յեվ մի ես ինքը, և կամ վհրտեղից,  
 Պատասխան տուր ինձ, անծանոթ հըսկա:  
 — Իմ փոքրիկ խուրջնում ուժն ե մայր-հողի,  
 Իսկ յես Միկուլան Սելյանինովիչ:  
 Պատասխան տըվավ անծանոթ հըսկան:

ԹԵ Ի՞ՆՉ ՈՒՂԱՐԿԵՑ ԹՈՒՐՔԻ ՍՈՒԼԹԱՆԸ ՄՈՍԿՎԱՅԻ  
 ՏԱՐԻ ԸՆԾԱՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

ՍԵՐԲԻԱԿԱՆ ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԵՐԳ

(ՈՌԻՍԵՐԵՆԻՑ)

Քաղաքից քաղաք, աշխարհքից աշխարհք  
 Թուղթ անցավ յեկավ Մոսկովու յերկրեն,  
 Յեկավ ու յեկավ, հասավ Հստամբուլ  
 Ու դըրին թուղթը վոսկի կառեթում  
 Ու բերին իրեն՝ թուրքի սուլթանին,  
 Ու թըղթի հետ ել սուլթանի համար  
 Շատ թանդ ընծաներ արքայի վայել  
 Մի վոսկի սինի, մեջն վոսկի մեջիդ,  
 Մեշիդի շուրջը պատ յեկած մի ոձ,  
 Են ոձի գլմին դըրած անգին քար,  
 Վոր գիշերն ենպես պարզ լուս եր տալիս՝  
 Վոնց վոր ցերեկը լուսն արեգակին  
 Ու իրահիմին, սուլթանի վորդուն,  
 Յերկու թանկագին թըրեր կալին սուր,  
 Դաստակներն ամբողջ զուտ մաքուր վոսկուց.  
 Ամենքի վրա մի-մի անգին քար:  
 Սուլթանի կընօշն վոսկի որորոց,  
 Գըլմավերելը քաջահավ բագեն:  
 Վոր ես ընծաներն առավ աննըման  
 Բնկավ Սուլթանը մըտքերի ծովն  
 Ի՞նչ զըրկի արդյոք Մոսկովի ցարին  
 Եսքան թանկագին ընծաների դեմ:  
 Միտք արավ ու միտք, վոչինչ չգտավ:

Ով մոտը յեկավ ամենքի առջև  
Պատմեց, պարծեցավ, թե ինչ ընծաներ  
Հստացավ ինքը Մոսկովի ցարից,  
Բայց վոչով ասել չի կարողանում  
Թե ինչ ուղարկի գըրանց փոխարեն:  
Ներս յեկավ ահա Ղուշբեդի փաշեն,  
Նրա առջել պատմեց, պարծեցավ.  
Փաշից յետն յեկան Խոջան ու Ղաղին:  
Յերկիր պագեցին ու համբուրեցին  
Ծունկն ու փեշերը իրեն սրբազն.  
Նրանց առջեն ել պարծեցավ նուչնպես  
Աղա թե եսպես խորհուրդ հարցըրեց.  
— Ո՞վ իմ ծառաներ, Խոջա ու Ղաղի.  
Յես ի՞նչ ուղարկեմ ցարին սրանց դեմ,  
Վոր ցարը ինձնից մընա բավական:»  
Պատասխան տվին Խոջան ու Ղաղին.  
— Տեր Սուլթան, ասին, քո ստրուկն ենք  
մենք,  
Մենք մըտածելու իրավունք չունենք.  
Լավ կանես կանչես ծեր պատրիարքին,  
Նա հեշտ կիմանա, հեշտ ել քեզ կասի  
Թե ինչ ուղարկես Մոսկովի ցարին,  
Վոր ցարը քեզնից մընա բավական:»  
Եսպես վոր ասին՝ լսեց սուլթանը,  
Իրեն կավասին ուղարկեց իսկուն  
Ու մոտը կանչեց ծեր պատրիարքին:  
Ու, յերբ պատրիարքն յեկավ իրեն մոտ,  
Ցուց տվավ նըրան ընծաներն ամեն,  
Ու շատ պարծեցավ, ու եսպես ասավ.  
— Ո՞վ դու իմ ծառա, ծերուկ պատրիարք,

Հետո կարող արդգոք սովորցնել դռ ինձ  
թե ինչ պարզեներ զրկեմ փոխադարձ,  
վոր իմ ուղարկած թանգ պարզեներից  
Գոհ մընա հըզոր ցարը Մոսկովի:  
Ասավ ու ծերը կամացուկ խոսեց.  
— Ո՞վ, իմ տեր Սուլթան, իմ կյանքի արև,  
Քո իմաստության առջևն ի՞նչ եմ յես:  
Բայց իմ կարձ խելքով, ի՞նչքան վոր գիտեմ,  
Քո մեծ տերության լի գանձարանում  
Դու բաներ ունես ցարին զըրկելիք,  
Բաներ վոր իսկի հարկավոր չեն քեզ,  
Իսկ նըրան անշափ շատ են ցանկալին  
Նեմանիչ Սավվի<sup>\*</sup>) գալազանն ունես,  
Կոստանդին կայսեր<sup>\*\*</sup>) վոսկի թագն ունես,  
Վոսկերերանի շուրջառը ունես,  
Սերբիակի հերոս Լազար արքայի  
Ռազմի խաչանիշ գըրոշակն ունես...  
Քո ինչի՞ն են պետք ես բաները վողջ,  
Իսկ ցարին, գիտեմ, շատ են ցանկալի...»  
Շատ հավան կացալ Սուլթանն ես խոսքին  
Ու պատվեր տրվավ ծեր պատրիարքին,  
Վոր կազմի ընծան ցարին զըրկելիք  
Ու գեսպաններին հանձնի Մոսկովի:  
Ծերն, ինչպես գիտեր, ամենն հավաքեց  
Ու գեսպաններին տալով խըստեց.  
— Գնացեք, վորդիք, Տեր-Աստված ձեզ հետ,  
Բայց, մտիկ արեք, մեծ ճամփով չերթաք,  
Անտառով անցեք, սարով գընացեք...  
1. Տ. Ե. Ա. Խառնահերպողի

• Սերբայի առաջին յեպիսկոպոսապետն և ու կազմակերպողը  
• Բյուզանդիայի վերջին կայութեա:

Ուր վոր ե՞ շուտով մարդիկ կուղարկեն՝  
 Խըլեն ձեղնից եղ պարզեները,  
 Վորոնցից բարձրը ու նըլիրական  
 Մեղ համար վոչինչ չը կա աշխարհում...  
 Թող սրբա համար իմ գլուխը տան,  
 Ու իմ մեղավոր մարմինը կորչի,  
 Բայց հոգիս արդեն փրկված ե ընդմիշտու»  
 Ասավ՝ ճանապարհ դրեց ծերունին:  
 Գոհ եր Սուլթանը, վոր գլուխ հանեց  
 Եսքան հեշտութիւնմբ ես գործը դժար,  
 Ու պարծենում եր ամենքի առջե,  
 Վոր եսքան եժան զուկս լեկավ տակից:  
 Ահա գալիս ե Ղուշեգի փաշեն:  
 Սրան ել պատմեց, հետը պարծեցավ.  
 — Հապա մի գըտիր, Ղուշեգի փաշա,  
 Ի՞նչ զըրկած լինեմ Մոսկովի ցարին. —  
 Նեմանիչ Սավիի ցուպն եմ ուղարկել,  
 Կոստանդին կամսեր թագն եմ ուղարկել,  
 Վոսկերերանի շուրջառն եմ զըրկել,  
 Սերբիայի հերոս Լազար արքայի  
 Ռազմի խաչանիշ դրոշն եմ զըրկել  
 Իմ ինչին ելին են ամենը պետք.  
 Եսկ ցարին շատ են պետք ու ցանկալի:»  
 Ու հարցունք արավ Ղուշեգի փաշեն.  
 — Եղ ում խորհըրդով դու եսպես արիր:»  
 Սուլթանը ուղիղ պատասխան տվեց.  
 — Ծեր պատրիարքի խորհըրդով արի:»  
 Ու եսպես ասավ Ղուշեգի փաշեն.  
 — Տեր Սուլթան, ասավ, իմ պայծառ արև,  
 Յեթե դու ցարին զըրկել ես եղոնք,

Վորոնցից վոր թանգ եղ մարդկանց համար  
 Վոչ մի բան չըկա արար աշխարհօռւմ,  
 Շատ լավ կանելիք յեթե դրանց հետ  
 Ղըրկած լինելիք և քո քաղաքի —  
 Մեծ Ըստամբուլի վոսկի բանալին:  
 Մին ե, ավելի խայտառակ ձեռվ  
 Ճետո յես տալու Մոսկովի ցարին...  
 Դրանց վրա յեր մնում հաստատուն  
 Քո տերությունն ու քո զորությունը,  
 Վոր արվիր տարան Մոսկովի ցարին:»  
 Ես վոր իմացավ՝ նոր գլխի ընկավ,  
 Ծափ զարկեց ապշած Սուլթանը եստեղ  
 Ու պատվեր տվավ փաշին հապճեպով.  
 — Ե՞ Փաշա, ասավ, իմ հավատարիմ,  
 Հավաքիր իսկուցն իմ զորքն լենիչեր,  
 Շնուտ դեսպաններին հասիր Մոսկովի,  
 Խիր նրանցից պարզեներն ամեն,  
 Վորոնց վրա վոր կանգնած եր հաստատ  
 Իմ տերությունն ու իմ զորությունը,  
 Վոր արվիր տարան Մոսկովի ցարին:»  
 Ու քաջ Ղուշեգը զորքը հավաքեց,  
 Գնաց ու գընաց մեծ ճանապարհով,  
 Վոր դեսպաններին հասնի Մոսկովի,  
 Ու վոչ մի ճամբում հետքները չըկա...  
 Յետ դարձավ, յեկավ Սուլթանին ասավ,  
 Թե վոչ մի ճամբում հետքները չըկա:  
 Բընեց Սուլթանի ցասումը անզուսպ,  
 Ահարկու ձենով գոտաց իր փաշին.  
 — Հե՞ փաշա, կանչեց, յնւտ արա, փաշա,  
 Գընա սպանիր ծեր պատրիարքին:»

Եսպես վոր կանչեց՝ դուրս վազեց փաշեն,  
 Գընաց ու բըոնեց ծեր պատրիարքին,  
 Պուրտեց թուրը, շողացրեց գըլիսին.  
 Ծեր պատրիարքը մեղմորեն խոսեց.  
 — Ե՛լ փաշա, ասավ, իստ քաշիր ձեռըդ,  
 Մի՞ ներկիր հողը անմեղ արյունով,  
 Թի՞ չե կը կազմի ակը յերկընքի,  
 Յերաշո կը լինի շուրջ յերեք տարի,  
 Զի տալ յերկիրը ել բար ու պտուղ՝  
 Ու լըսեց փաշեն ծերունու խոսքին՝  
 Տարավ կանգնեցրեց ծովի յեզերքին:  
 Սուր թուրը նորից պարտեց գըլիսին,  
 Ու նորից խոսեց արդար ծերունին.  
 — Ե՛յ փաշա, ասավ, քեզ քաշիր ձեռըդ,  
 Յեկ իմ արյունը մի՞ թափիր ծովը,  
 Թե չե փոթորիկ կանի սոսկալի,  
 Ծովը կը հուզվի, կելնի ալեկոծ,  
 Նավեր, նավակներ իր տակը կանի,  
 Շեներ, քաղաքներ կը ծածկի ջրով:  
 Բայց փաշեն նրան ել ականջ չարավ,  
 Զարկեց ու կտրեց գլուխը ձերմակ:  
 Ու եսպիս մեռավ արդար ծերունին,  
 Ինքն արքայություն գընաց յերկընքում,  
 Իսկ մեղ խնդություն տվեց ես կյանքում:

1915

## ՄԱՐԿՈՆ ՌԱՄԱԶԱՆԻՆ ԳԻՆԻ ՅԵ ԽՄՈՒՄ

(ՍԵՐԲԻԱԿԱՆ ԱԶԳ. ԺՈՂ. ԵՊՈՍԻՑ)

Սուլթան Սուլեյման հրաման հանեց,  
 Վոր իրեն իերկում վոչ մի հպատակ  
 Ռամազան որը գինի չխմի,  
 Կանաչ դուամա չհագնի վերից,  
 Կողքիցը պողպատ թուր չըկախ անի,  
 Շուրջապարի չերթա աղջիկների հետ:  
 Թուրը կախ արավ Մարկոն իր կողքից,  
 Կանաչ դուամա հագնի վերկից,  
 Ռամազան որը գինի յե խմում,  
 Կանչում, հավաքում անցվոր ու խոջա,  
 Խմում ե, թասը նրանց և տալիս:  
 Գալս են թուրքերն իրենց Սուլթանին.  
 — Սուլթան, մեր տերն ես, մեր ծնողն ես դու.  
 ԶԲ վոր դու ինքդ հրամանք արիր,  
 Վոր մեր ես տոնին, ես ծանը պահքին  
 Վոչով բերանը գինի չտանի,  
 Վոչով դուամա չհագնի կանաչ,  
 Վոչով կողքիցը թուր չըկախ անի,  
 Շուրջապարի չերթա աղջիկների հետ:  
 Մարկոն աղջկանց հետ շուրջապարի կերթա,  
 Մարկոն կողքիցը թուր ե կախ արել,  
 Մարկոն հագել ե կանաչ դուամա,  
 Ռամազան որը գինի յե խմում:  
 Գլուխը քարը՝ թե մենակ խմեր,  
 Անցվոր ու խոջա կիտում ե գլխին,

Համ ինքն ե խմում, համ նրանց տալիս,  
 Սուլթան Սուլեյման ես լսեց թե չե՞  
 Յերկու սուրհանդակ զրկեց Մարկոյին,  
 — Գնացեք, ասավ իմ արագ տղերք,  
 Գնացեք շոտով Մարկոյին ասեք՝  
 Թե՛ կանչում ե քեզ Սուլթանն անհապաղ,  
 Գնացին արագ Սուլթանի մարդիկ  
 Շիտակ Մարկոյի վրանը մտան,  
 Խմում ե Մարկոն գավաթն առաջին,  
 Մեջը կըլինի տասներկու ոխա:  
 — Լսիր, ասացին, քաջազուն Մարկո,  
 Սուլթանը զրկեց մեզ քո յետկից,  
 Վեր կաց տեղիցդ, գնանք Սուլթանին,  
 Սաստիկ բարկացակ Մարկոն ես խոսքից,  
 Վեր կալավ ծանր գավաթն առաջի  
 Ու՝ առ հա կըտաս սրանց գլխաներին:  
 Դլուխ ու գավաթ ջարդ ու փուրդ յեղան,  
 Արյուն ու գինի խառնըլեց իրար:  
 Ապա թե գնաց Մարկոն Սուլթանին.  
 Գնաց աջ կողմը նստեց ծունկ ծնկի,  
 Սամուր գլխարկը քաշեց աչքերին,  
 Իր ծանր գուրզը դրեց առաջին,  
 Սուր թուրն ել ուսին բոնած պատրաստի:  
 Ու եսպես խոսեց Սուլթանը թուրքի:  
 — Իմ հոգեսրդի, քաջազուն Մարկո,  
 Դու հո լավ գիտես կարդ եմ դրել իս,  
 Վոր մեր մեծ պահքին, Ռամազան որը՝  
 Վոչով բերանը գավաթ չտանի,  
 Վոչով դոլամա չհագնի կանաչ,  
 Շուրջապարի չերթա աղջիկների հետ,

Իմ ծառաները ինձ մոտ են գալիս՝  
 Վատ խարաբներ են բերում քեզանից՝  
 Դու պար ես գալիս, իբրև, շուրջապարի,  
 Պողպատի թուր ես կապել քո մեջքին,  
 Կանաչ դոլամա հագել վերելից,  
 Խամազան որը գինի իս խմում,  
 Անցվոր ու խոջա կանչում՝ խմեցնում,  
 Ի՞նչ ես գլխարկի քաշել աչքերիդ,  
 Ինչու իս բերել քո գուրզը քեզ հետ,  
 Ինչու յիս թուրդ բոնել պատրաստին  
 Պատասխան ավեց Մարկոն Սուլթանին.  
 — Ո՞վ իմ հոգեհալը, Սուլթան Սուլեյման,  
 Իմ հավատն եսպես ինձ թուրլ ե տալիս,  
 Յես ել խմում եմ ձեր պահքի որը:  
 Մենակ խմելը անվայել ե ինձ,  
 Յերբ ուրիշները մտիկ են անում,  
 Յես ել կանչում եմ անցվոր ու խոջա,  
 Վոր մտիկ չանեն, նրանք ել խմեն:  
 Կանաչ դոլամա ենդուր են հագնում,  
 Վոր ջահել մարդ եմ ու սաղում ե ինձ,  
 Կողքիցս յեթե թուր եմ կախ արել,  
 Իմն ե, իմ փողով իս ինքս եմ առել  
 Աղջիկների հետ թե պար եմ գալիս,  
 Ենդուր, վոր ազատ մարդ եմ ամուրի,  
 Ինչպես վոր ինքտ յեղել ես մի որ:  
 Գլխարկս ենդուր եմ քաշել աչքերիս,  
 Վոր չեմ զիմանում, ճակատս երվում ե  
 Յերբ վոր խոսում եմ Սուլթան հորս դեմ:  
 Իմ գուրզն ել հետըս ենդուր եմ բերել,  
 Վախում եմ հանկարծ կոիվ պատահի

Յեզ՝ յեթե կոիվ պատահի հանկարծ՝  
Վայ նրան, ով մոտ կը նի Մարկոյին։»  
Չորս կողմը նախեց Սուլթանը եստեղ,  
Տեսնի թե, ով կա մոտիկ Մարկոյին։  
Տեսավ, վոր վոչով չկա վրանում  
Ու ինքն ե մենակ մոտիկ Մարկոյին։  
Ահից սկսեց քաշվել յետ ու յետ,  
Մարկոն ել առաջ՝ դեպի Սուլթանը,  
Տարավ ու սեղմեց վրանի պատին։  
Սուլթանը ձեռքը գրպանը կոխեց,  
Մի հարյուր գուկատ հանեց գրպանից,  
Հանեց, դեմ արավ ջահել Մարկոյին։  
— Ա՛ռ, ասավ, Մարկո, տար՝ դինի խմիլ։»

1916 Բորժոմ

## ՄԱՐԿՈՆ ՎԵՐՑՆՈՒՄ Ե ՊՍԱԿԻ ՀԱՐԿԸ

(ՍԵՐԲԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՊՈՍԻՑ)

Վաղ լուսաբացին վերկացավ Մարկոն,  
Զին հեծավ, չափեց գաշտը կոսովի։  
Գլնաց, վոր հասավ Սերվանա գետին՝  
Դիմացը յելավ մի սիրուն աղջիկ։  
— Բարի որ, ասավ, կոսովցի քուրիկ։»  
Սիրուն աղջիկը խոր գլուխ տըվեց.  
— Բարին արևիդ, անծանոթ կտրիճ։»  
Ու եսպես խոսեց Մարկոն քաջազուն.  
— Քուրիկ, դու ջահել, եղքան գեղեցիկ,  
Հասակի նոճի, ալտերըդ կարմիր,  
Ափսոս, վոր մենակ ծամդ ե խանգարում,  
Ինչու յե, քուրիկ, ծամըդ ճերմակեր,  
Բախտըդ, յերկի, թռել ե քեզնից,  
Դու ինքդ ես արդյոք ցավի հանդիպեր,  
Թե քո խեղճ մերը, թե հերըդ ծերուկ։»  
Կոսովի աղջիկն արտասուք թափեց,  
Արտասուք թափեց ու եսպես ասավ.  
— Զե, ախալերացու, անծանոթ կտրիճ,  
Յես չեմ խորտակել իմ բախտն իմ ձեռքով,  
Փորձանքը ինքն ե յեկել իր վոտով։  
Ես իննը տարի կը լինի ուզիդ,  
Հեռվից արաբը մեղ մոտ ե յեկել,  
Կապալով կոսովն առել Սուլթանից,  
Դըրել ե յերկիրն ամբողջ հարկի տակ,  
Ուտում ե, խըմում դաշտը բովանդակ։  
Հ. Թումանյան—3

Մի ուրիշ հարկ ե դըրել մեղ վրա.  
 Ամեն հարսնացու, վոր մարդու գընա,  
 Պետք ե վըճարի յերեսուն վոսկի.  
 Ամեն փեսացու, վոր աղջիկ ուզի,  
 Յերեսուն վոսկի, չորսն ել ավելի:  
 Ով եսքան վոսկի ուներ գըրպանում,  
 Ով եսքան վոսկի տըվեց արաբին՝  
 Ամենքը դարձան մարդու-վորդու տեր:  
 Յես վորք աղջիկ եմ. յեղբայրներ ունիմ,  
 Նըրանք ել աղքատ, ձեռքները պակաս,  
 Չեն կարող եսքան հարկ տան արաբին:  
 Սըրա համար չեմ գընում յես մարդու,  
 Չեմ կարում դառնամ տան ու տեղի տեր.  
 Ես ե իմ ցավը, անծանոթ ախակեր:  
 Բայց թե յերանի ես լիներ մենակ,  
 Աղջիկն իր տանը նըստեր անպըսակ,  
 Կամ աղջիկ չառներ տըղան նորահաս:  
 Ուրիշ մի ցավ կա, անարդ առավել,  
 Արաբը ուրիշ մի հարկ ե դըրել,  
 Նոր պըսակված հարսին ու փեսին  
 Գիշերը տանեն արաբի մեծին,  
 Ինքը նոր հարսին փայի, փայփայի,  
 Իրեն մարդիկը ջահել փեսալին:  
 Ամեն տուն, ուր կան աղջիկ ու տղա,  
 Ղրկել են հերթով ամենքն արաբին,  
 Յեկել ե հերթը ինձ հասել հիմի,  
 Վոր սև արաբին գընամ յես եսոր:  
 Վոր նըրա կինը դառնամ յես եսոր:  
 Ու միտք եմ անում ինքը իմ միջին.  
 Տե՛ր Աստված, արդյոք ինչ անեմ հիմի.

Ծըմմկը գընամ, թոկ գըցեմ, կախվեմ,  
 Թե գետը գընամ, ջուրն ընկնեմ, խեղպվեմ.  
 Ինչ վոր ել լինի՝ մեռնեմ վերջանամ,  
 Քան չար թշնամու տարփածու դառնամ:  
 — Քուրիկ ջան, ասավ Մարկոն դյուցազուն,  
 Մի կըտրիր հույսը, համբերող չեղիր.  
 Վոչ ջըրում խեղպվիր, վոչ ծառից կախվիր,  
 Ու մի կորցընիր ինքըդ քո հոգին:  
 Ցույց տուր ինձ մենակ՝ տեղը արաբի,  
 Ո՞ւր ե արաբը, վ՞րտեղ ե կենում.  
 Խոսելիք ունիմ եսոր նըրա հետ:  
 Պատասխան տըվեց կույսը կոսովի.  
 — Ախպեր ջան, ասավ, անծանոթ կտրիմ,  
 Ինչիւ յես հարցնում տեղը արաբի,  
 Արաբի տեղը դատարկ տեսնեմ յես:  
 Զընի՞ թե դու յել աղջիկ ես ուզել,  
 Գընում ես, վոր տաս հարկը պըսակիու,  
 Զընի՞ թե քո մոր մինուճարն ես դու.  
 Ցեթե արաբը տա քեզ ըսպանի՝  
 Խեղճ պառավ մերըդ ի՞նչ պիտի անիւ:  
 Ու Մարկոն ձեռը գըրպանը տարավ,  
 Յերեսուն վոսկի հանեց գըրպանից,  
 Տըվեց կոսովի տըխուր աղջըկան:  
 — Առ, քուրիկ, բըռնիր ես յերսուն վոսկին,  
 Դարձիր յետ գընա քո տունը ձերմակ,  
 Ենտեղ ըսպասիր քո կարմիր բախտին.  
 Ցույց տուր ինձ մենակ տունը արաբի,  
 Կերթամ քո հարկն ել կըտամ յես նըրան:  
 — Արաբը, ախպեր, տուն ու բակ չունի:  
 Նակիր դաշտն ի վար, դատարկ ու դուրան.

Մի տեղ և մենակ դըրոց ծածանում,  
 Են սև արարի դըրոցն և մետաքս,  
 Եստեղ և նըրա վըրանը զարկած,  
 Վըրանի շուրջը կանաչ ցանկապատ,  
 Ամբողջ ցըցահան շարած գըլուխներ,  
 Մեր կըտրիճների գըլուխներն անբախտ:  
 Քառուն պահապան ունի արաբը,  
 Հըսկում և անքուն գիշեր ու ցերեկու  
 Հենց վոր վերջացավ խոսքը աղջըկա,  
 Շուռ տըվեց Մարկոն գըլուխն իր ձիու,  
 Քըշեց կոսովի արձակ դաշտն ի վար:  
 Տաքացրեց, լըցրեց իր հուր Շարացին:  
 Վոտների տակից կըրակ և թըռչում.  
 Պընչերից բոց և իելնում կապուտակ:  
 Փընում և Մարկոն սիրտը լիփ-լեցուն,  
 Իր այտերն ի վար արցունք և հոսում,  
 Արցունքի տակից եսպես և խոսում.  
 — Հել, դու լայնարձակ սուրբ դաշտ կոսովիր,  
 Ես ինչ ես տեսնում, ինչ տեղ հասար դու  
 Մեր թագից հետո, մեր փառքից հետո.  
 Արաբն իեկել ե՞ չոքել մեզ վըրա:  
 Զեմ կարող տանել ես ցամք յես դաժան,  
 Զեմ կարող տանել անարգանքն ես սև,  
 Ես տուրքն անորեն, ես հարկն անպատիվ,  
 Վոր աղջիկ-տըղա պըդվեն սերբերի:  
 Քուրեր, ձեր վոխը եսոր յես կառնեմ,  
 Զեր վոխը կառնեմ, կամ թե կը մեռնեմ:  
 Ու քեց շտուկ վըրանի վըրա:  
 Պահնորդ արաբներ հեռվից աչքեցին  
 Ու եսպես ասին արաբի մեծին:

— Մեր տեր, ասացին, մեր իշխան արաբ,  
 Կապուտ նժուզգը հեծած ամենի,  
 Կոսովի դաշտով կըրակի նըման,  
 Մի արմանք զարմանք կտրիճ և գալի:  
 Կըրակ և թըռչում նըժուզգի վատքից,  
 Պընչերից ծուխ և յելնում կապուտակ:  
 Մեր վըրա յե սա քըշում շիփ-շիտակ:  
 Արաբի մեծը պատասխան տվեց.  
 — Հել, ասավ, տըղերք, իմ քառուն քաջեր,  
 Ով կարա իր ձին քըշի մեզ վըրա:  
 Նոր նըշան դըրած մի ջահել և դա,  
 Իրեն հարսանքի հարկն և գալիս տա:  
 Ավսոսն և գալիս յերեսուն վոսկին,  
 Երգում և իր մեջ ու քըշում և ձին:  
 Դուքս յեկեք դրա առաջը շուտով  
 Գըլուխ վեր բերեք հարգանքով, պատվով,  
 Ոգնեցեք, ձիուց իջեցրեք իրեն,  
 Ձին ու զենքերը առեք իր ձեռքից,  
 Ու իրեն բերեք վըրանը — ինձ մոտ:  
 Յես վըրա վոսկին չպիտի առնեմ,  
 Դըրա գլուխը պետք և յես առնեմ,  
 Ու խաղուն կապուտ նըժուզգը տակի:  
 Ասավ ու խըմբով ծառաներն յելան,  
 Վոր ձեռքիցն առնեն ձին ջահել հուրի,  
 Բայց հենց մոտեցան, տեսան Մարկուին,  
 Ել սիրտ չի արին առաջը գընան,  
 Փախան, վըրանը մըտան վերըստին,  
 Թագ կացան յետեն արաբ իշխանի,  
 Իրենց թըրերը ծածկեցին փեշով:  
 Ներս մտավ Մարկոն բակը արաբի,

Ցած իջավ ձիուց վըրանի շեմքում.  
— Գընա, իմ Շարաց, քեֆ քաշիր, ասավ,  
Քեֆ քաշիր եստեղ, բակումն արարի,  
Բալց, տես, դըռնիցը մոտիկ ման արի,  
Գուցե թե շուտով հարկավոր լինիս:  
Ու մըտալ Մարկոն վըրանն արարի:  
Սիրուն սերբուհին առաջին կանգնած:  
Արաբը նըստել գինի յի խըմում:  
Ներս մըտավ Մարկոն ու բարե տըվեց.  
— Բարի որ, տանտեր, բարի աջողում:  
Արաբը սիրով բարել առավ.  
— Աստծու բարին քեզ, անծանոթ կտրիճ.  
Նըստիր, մի բաժակ դատարկիր մեզ հետ,  
Հետո կը պատմես՝ ինչու յես յեկեր»  
Յետ դառավ Մարկոն պատասխան տըվեց.  
— Գինի խմելու ժամանակ չունիմ,  
Յեկածս ել արդեն բարի յե ինքնին.  
Սըրանից բարի ել ինչ կը լինի.  
Աղջիկ եմ ուղեր, պըսակ եմ գընում,  
Հարսանիքավորը կանգնած ե ճամփին.  
Յեկա՝ վըճարեմ տուրքը պըսակի,  
Վըճարեմ և ինձ, և հարսիս համար,  
Շուտ արա, վոր յետ չընկընենք ճամփից,  
Յես քանի վոսկի պիտի վըճարեմ:  
Ես խոսքի վըրա արաբը ասավ.  
— Թե քանի վոսկի — դու ինքըդ գիտես.  
Հարսը տալիս ե յերեսուն վոսկի,  
Փեսան յերեսուն, չորս ել ավելի:  
Բալց յես տեսնում եմ՝ կըտրիճ մարդ ես դու,  
Հարլուր ել վոր տաս՝ ինչ կա քեզ համար:

Ու Մարկոն ձեռը գրպանը տարավ,  
Հանեց, շըպրտեց մի յերեք վոսկի:  
— Հավատա, ասավ, ել ավել չունիմ:  
Թե կուզես՝ մընա, ըսպասիր մի քիչ,  
Մինչև պսակից յետ գամ հարսիս հետ,  
Բաժինքը վող քեզ, հարսը ինձ լինի:  
— Գարշելիք, թըշշաց արաբն ոձի պես.  
Սակարկում ես դու... դու ծաղրանում ես ինձ...  
Յես չեմ հավատում ձեզնից վոչ մեկին:  
Ասավ վեր կացավ, իր գուրզն ահագին  
Զարկեց Մարկովին յերեք-չորս անգամ:  
Զարկեց. ծիծաղեց Մարկոն քաջաղուն,  
— Հեյ, դու սե արաբ, հեյ արաբ, ասավ,  
Կատակ ես անում, թե ճիշտ ես զարկում:  
Ու ոձի նման արաբը թըշշաց.  
— Կատակ չեմ անում, սըրտով եմ զարկում:  
— Ենպես կարծեցի կատակ ես անում:  
Դե վոր եղապես ե, սըրտով ես զարկում,  
Ինձ հետ ել մի գուրզ կընի յերկի,  
Բանի անգամ վոր դու ինձ զարկեցիր,  
Ենքան անգամ ել յես քեզ կը զարկեմ.  
Նըրանից հետո դաշտը դուրս կըգանք,  
Դաշտը կը ջոկի կտրիճը մեր մեջ:  
Ասավ ու առավ իր գուրզը մեխված  
Ու ենպես զարկեց արաբի մեծին,  
Վոր գլուխն իսկուցն թըռավ ուսերից:  
Նախեց, ծիծաղեց Մարկոն քաջաղուն,  
— Տեր Աստված, ասավ, փառքըդ շատ լինի,  
Ինչքան հեշտ թըռավ զըլուկն արաբի,  
Ասես գլուխ չեր ունեցել իսկի:

Ապա թե հանեց թուրը հավլունի,  
 Վող ծառաներին հընձեց խոտի պես,  
 Քառասուն հոգուց չորսին թող արավ,  
 Վոր զընան անցնեն աշխարհքից աշխարհք,  
 Իր ու արարի պատմությունն անեն:  
 Բակի շուրջ շարած գըլուխներն առավ,  
 Առքով ու փառքով թաղեց հողի մեջ,  
 Վոր ցին ու ադռավ չգան, չկըտցեն,  
 Նըրանց փոխարեն՝ արարի մարդկանց  
 Գլխները զարկեց, շարեց բակի շուրջ,  
 Ու տիրեց գանձին արարի դիզած:  
 Չորս արարին ել, վոր թողեց կենդան,  
 Չորս կողմի վըրա զըրկեց աշխարհքի,  
 Վոր զընան, անցնեն դաշտը Կոսովի,  
 Պատմեն ու եսպես կանչեն ամեն տեղ.  
 — Վորտեղ վոր հասած աղջիկ կա տան մեջ՝  
 Արձակ-համարձակ թող մարդու զընա,  
 Ու թող պըսակվեն սերբերը ազատ.  
 Վերացալ, ջընջվեց հարկը պըսակի,  
 Մարկոն վըճարեց ամենքի համար:

1916

Վ. Ա. ԺՈՒԿՈՎԱԿԻ

## Ա Ր Ի Լ Լ Ե Ս

Միգում կորավ իդա սարը,  
 Մըռալեցավ Տըռվադան,  
 Լուռ և ռազմի հարթավայրը,  
 Թընած բանակն Ատրիդան:  
 Խաղաղ են շուրջ: Առկայծում են  
 Խարուկները բանակի,  
 Յերկար ու ձիգ ձայնարկում են  
 Պահորդները մեկ մեկի:

Ծագեց պայծառ լուսնեղջուրը  
 Ծովի վըրա եգելան,  
 Բարձը ափերն ու աստղերը  
 Ծովի խորքում ցոլացան:  
 Դատարկ դաշտում լիրկում ե  
 Մենակ կառքը Պըիամի, —  
 Տանում ե իր Հեկտորի դին  
 Գոռ բանակից հույների:

Ահա կանգնեց ծովի ափին  
 Աքիլեսը ահարկու.  
 — Ընկավ, ծերաւկ, քո Հեկտորը,  
 Հանգավ լույսը քո հոգու:  
 Անդրոմաքեն ու Հեկաբեն  
 Դարպասներում անդադար  
 Քեզ են մընում... դարձիդ բոսկեն  
 Կյանք կամ մահ ե նըրանց համար:

Յեկ տըխրաբեր արշալուսին  
Կը բուրի խունկ հաշտաբար,  
Թաղման յերգով կը հեծեծեն  
Ամեն մի տուն ու տաճար:  
Հայր, մայր, այրի մաղթանքներով  
Սափոր կածեն թանգ փոշին,  
Ու դըժոխքում աղոթքներով  
Հանդիստ կը տան հերոսին:

Խեղճ ալեռ, խոնարհեցիր  
Գըլուխըդ իմ առաջին,  
Յեկ ալս ձեռքը համբուրեցիր,  
Վոր լաց տվավ քո աչքին...  
Վորդուր մասին եր քո աղերս.  
Ո՛, մի տրտմիր, ալեղարդ,  
Մի բաղդ վըճուեց յերկինքը մեզ,  
Խնձ ել ընկծեց Արամազդ:

Մոտ ե ժամըս. պատրաստած ե  
Նետը անգութ որհասի,  
Յեկ պարկուհին ընդհատել ե  
Արդեն որերն իմ կյանքին  
Ճըլընչում ե դժոխքի դուռը,  
Գուժում ե ձախն ահոելի.  
— Վերջացմած ե, հանգավ ջահը  
Պելիկսի որերի...

Ո՛վ, այս ափից յետ չի դալու  
Յեկ քու վորդին անվընաս.  
Շուտով, շուտով պիտի և դու,  
Ո՛վ Պելես, վորբանաս,

Կանցնի ռազմի արհավիրքը,  
Աքիլեսիդ կը սպասես,  
Կը զարդարես արքունիքը՝  
Շուք ու փառքով ընդունես:

Մըտիկ կանես դատարկ ծովին  
Ափից տըխուր ու տըրտում,  
Թե չեն գալիս արդյոք նավեր,  
Առագաստ չի էրեւում...  
Նավեր կը գան իլլոնից,  
Յես չեմ վինի վոչ մեկում,  
Յես չեմ զարթնի մահվան քընից,  
Ու կը մընամ ալս հովտում...

Իզուր վերջին տագնասի մեջ  
Դու քո վորդուն կը խնդըն  
Ու կարկամող բազուկներով  
Նըան կողքիդ կը փընտրես:  
Միրած յերկրից ժամի անջատման  
Զի քաղցրացնի նա այն որ,  
Ու մինչ ափերն մոռացութիւն  
Զի տարածվի ձայնը հոր:

Իմ հայրենիք, վըճիտ ջրեր,  
Չըքնաղ վալուր հարազատ,  
Յեկ ձիթենիք ու դափնիներ,  
Հովիտների շուք ու դարդ,  
Ճոխ ծաղկեցնք, վըթըթեցնք,  
Խնչպիս առաջ, աննըման,  
Խնչպիս առաջ միշտ թընդացնք  
Միայն ձայներով խընդութիւն:

Բայց Աքիլես ու Պատրոկլես  
Ել չեք տեսնի դուք բնավ...  
Սպերքի ջըրեր, բազուկը ձեղ  
Դըլսիցը մազ խոստացավ,  
Բայց գըլուխը փոթորկալի  
Պատերազմում ահադին  
Պատրոկլեսին յես զոհեցի,  
Ել չըսպասեք իմ տուրքին:

Պատրաստել ե նետը արդեն  
Ապոլոնը անողոք,  
Հսպասում ե նոր յեկվորին  
Քարոնը սև Ստիքսի մոտ,  
Յեվ ափերից մռացության  
Պատրոկլեսը գիշերով  
Յեկավ ինձ մոտ թեթև, անձայն,  
Վորակս յերազ, թըլոչելով,

Վորակս շունչը մեղմ զեփյուռի  
Նա շըշընջաց ինձ վըրա,  
Նրա ձախը յես լըսեցի,  
Վեր նայեցի ու տեսա  
Քընքուչ դեմքին հետք արտոսրի  
Յեվ անջատման խորին ցավ...  
Չեռքըս իրեն տարածեցի...  
Պատարկ մըթնում չըքացավ...

Հսկյուրոսից նեռալտուեմ  
Դեպի հեռուն կը լորա,  
Մի անձանոթ ափ կը տեսնի  
Կանաչ բըլրակն իր վըրա:

Նավավարը այնժամ կասի՝  
Դարձած կողմը բըլրակի.  
— Ահա շիրիմն Աքիլեսի,  
Այն ել տեղն ե բանակի...

— Այնտեղ, պարսպից նա գիշերով  
Յերեսում եր մեզ ահեղ,  
Անտանելի հուրն աչքերում,  
Սաղավարտով ճաճանչեղ.  
Յեվ յեռակի վորոտալով,  
Ահ եր ազդում քաղաքին,  
Ու Տրոյացին գունատ դեմքով  
Զենքը ձըգում եր գետին:

— Այնտեղ ձեռքը Ատրիդեսին  
Տալով դաշը հաստատեց...  
Այնտեղ կառքով նա մոլեզին  
Քաղքի վրա հարձակվեց...  
Այնտեղ հողում իր յետելց  
Քարը տըվալ դին չեկտորի,  
Հառեց աչքերն ըսպառնալց  
Վերան լըքած Տըրոյի...

Ու իր նավից նեռալտուիմ  
Կիջնի ափը սըլրազան,  
Վոր միայնակ բըլրի վըրա  
Դընի և սուր, և վահան:  
Շուրջը արդեն դատարկվել ե...  
Խաղաղ Սիմուլս ու Քըսանտ,  
Բաղեղ ու փուշ պատատել են  
Տրովագային քարուքանդ:

Կանցնես դաշտը պատերազմի,  
Ուր Աքիլեսն ե կըոված,  
Կը տեսնես հորանն յերեների  
Շիրմաց շուրջը մոռացված:  
Ու քեզանից վերև հանկարծ  
Կը լըսես ձայն թերի...  
Մենք կը լինենք թէ թէի տված,  
Հնկերներս հին որերի...

Անժամ հիշեր Աքիլեսին,  
Տերկըից արագ նա անցավ,  
Բախտը նըրան անփառունակ  
Այստեղ մի դար խոստացավ,  
Բայց մերժելով դատարկ կյանքը,  
Փառքի ըսպեն ընտրեց նա,  
Ու ընկերի համար մեռավ,  
Հավատարիմ մինչեւ մահ:

Լըսեց Աքիլ... Մութն ե իդան,  
Իլիոնը գեռ տըխուր,  
Քընած բանակը Ատրիուան,  
Պատերազմի դաշտը լուս.  
Ու ծըխալով առկայծում են  
Խարույկները բանակի,  
Ֆերկար ու ձիգ ձայնարկում են  
Պահնորդները մեկ մեկի:

### ԴԵՑԻՄ ԼԱԲԵՐԻՈՍ\*)

Յեվ խայտաճամուկ միմոսի շորով՝  
Կեսարի կանչին  
Լաբերիոսն ահա կանգնեց կըկեսում,  
Հոռմի առաջին:  
Թընդաց Հըռոմը, և աթուներից  
վեր կացան հանկարծ  
Ազնըվականներն ու ժողովուրդը  
ահից սարսափած,  
Ու դըզըրդացին արձակ կըրկեսում  
շըփոթ ու շըշունչ,  
Հազիկ լըսելի խառնակ աղաղակ  
ու գըժգոհ տըրտունչ.  
«Լաբերիոսն ալստեղ... և ինչպես միմնս...  
Ալստեղ որենքով  
Գերիներն իրենց կուռ շըդթաների  
շըռնչյուններով,  
Սըրի շաչունով անմահ Հոռմի  
հըրձվանքի համար  
Ճըգնում են ըմբցի և կամ միմոսի  
պըսակ ստանալ...  
Լաբերիոսն ալստեղ... բայց չի մոռացել  
Հըռոմը նըրան.  
Հին քաղաքացի, ծեր, հըռչակավոր  
պոետ աննըման,

\*) Անցքը պատահել ե Հուլիոս Կեսարի որով

Յեկ արդ, կըրկեսում, ամբոխի առջև  
 այսպես նա կանդնած,  
 լուռ ու գըլլսակոր գետնին ե նայում  
 ամոթից շիկնած...»  
 Ու տըրտունջների ձայներն անորոշ  
 նըրան են հասնում  
 Բայց իր աչքերը չըռոմի վրա  
 նա չի կամենում  
 Բարձրացնել այժմ, նըրա բացահայտ  
 վըճոփ ժամանակ.  
 Յեկ անարդանքին ինքնաբավական  
 հայացքով մենակ  
 Կեսարն ե նայում: Նըշան տըլվավ նա  
 հրամալող ձեռքով:  
 Լըռեց վերըստին հըպարտ չոռմը:  
 Գետնակոր գըլլսով,  
 Ինչպես աղոթող ծանըը փորձանքի  
 ահավոր ժամին,  
 Կանդնած ե հուզված հանդիսի առջև  
 յերգիչ ծերունին:  
 Բայց դեմքը ահա առաջվա նըման  
 փալիցավ վառ վառ,  
 Մըռալ ճակատը դարձավ վերըստին  
 հանդիստ ու պայծառ,  
 Խոհուն աչքերը դժողոհ ժողովին  
 նայեցին կըրկին,  
 Ու նորից յերգի, բանսաստեղծության  
 համարձակ հոդին  
 Հասավ պոետին, սիրտ տվավ նըրան.  
 Նա զվարթացավ,

Պաղ պաղ սարսուռը սըրտիցը մինչեւ  
 մատները անցավ...  
 Ալլակերպված ե նա բոլորովին:  
 Մի ակնթարթում  
 Նա վոգեորվեց: Վառված աչքերը  
 կըրակ են ցալտում:  
 Ընկճող հայացքով իր շուրջն ե նայում:  
 Տարածեց ահա  
 Անզուսպ խըռովքից դողացող աջը  
 քընարի վըրա...  
 Ժողովը լուռ ե: Բոլոր աչքերը  
 խոնարհած են ցած:  
 Ազնվականները մըթին գիշերից  
 մըռալ են նստած,  
 Յեկ ասպետները նըստած են խըրոխտ  
 դեմքով կընճռապի.  
 Ուրախությունից փայլում ե դեմքը  
 ահեղ տիրողի:  
 Նոր նըշան տըվավ: Յեկ ահա յերկշոտ  
 ու անհամարձակ  
 Բարձրացավ ձայնը... ծերի դողդոջուն,  
 չոր մատների տակ  
 Գովված քընարի վոսկի լարերը  
 հընչեցին հանկարծ.  
 Խորին լոռության ժամին առաջին  
 յերգը վորոտաց:  
 Յեկ սթափկեցավ չոռմը նորից.  
 մարդիկ շարժվեցին,  
 Յեկ աշխատում են պարզորոշ լըսել  
 զայրացած յերգչին:

Իսկ ալմորը, անխիղճ անպատված  
 հին քաղաքացին,  
 Տակավին հըպարտ, արհամարհանքով  
 նայում ե Հռոմին:  
 Նա յերգում ե անբավ փառքը,  
 մեծությունը կեսարի,  
 Բարձըր ինելքն ու տերությունը,  
 իշխանությունը բարի:  
 Յերգում ե փալլը նրա հաղթության  
 և մաղթում ե կյանք,  
 Յել ուղարկում ե հըզոր կեսարին  
 հարգ ու մեծարանք:  
 Փառաբանում ե նա ձոխությունը  
 ու փառքը Հռոմի,  
 Յեկ աղաջում ե, վոր բաժին անեն...  
 իլինդը միմոսի...  
 Թախանձում ե նա, վոր վող մտածեն  
 ինչպես վոր ինքը,  
 Կեսարի շըրթան վըրա ճանաչեն  
 իրենց որենքը,  
 Վոր հին որերի ազատ յերգերը  
 ընդմիշտ լոեցին,  
 Ու միշտ Կեսարի թշնամու ջանքերն  
 իզուր ցըրվելին.  
 Հայրերի գոռող Հռոմը գըլուխ  
 խոնարհի նըրան,  
 Հըռոմում մարդիկ մըտածեն այնպես...  
 միմոսի նըման...  
 Հանկարծ վիրավոր պոետը ցընցեց  
 գըլուխն ալեզարդ,

Հընչող լարերին կատաղի ձեռքով  
 զարկեց հուսահատ,  
 Քնարը ձըգեց ու գոռաց ցաւկոտ  
 ձախով ահարկու.  
 — Բարձրացիր, Հըռոմ, իրավունքները  
 կորցընում ես դու...

1892

## Բ Ա Յ Ր Ո Ւ

## Ի Ն Ե Ս Ի Ն

Ո, վոչ, մի ժըպտա իմ վշտի վրա,  
Ախ, կյանքում ժպտալ կարող չեմ ել յես,  
Բայց յերկինք չանի, վոր լաց լինիս դու,  
Վոր դու արտասվես՝ գուցե զուր ինձ պես

Դու են ես հարցնում ինչ ցալ ե գաղտնի,  
Վոր խընդութիւնը ու կյանքս ե մաշել,  
Բայց ինչու, չըքնաղ, ինչու իմանաս,  
Յերբ դու յել նուկնիսկ չես կարող բուժել:

Վոչ սերն ե պատճառ, վոչ ատելութիւն,  
Վոչ սին փառքերի կորուստը, ավաղ,  
Վոր փախչում եմ ինս ձըգած տեղ ու տուն,  
Ձըգած ամեն բան, ինչ վոր թանգ եր վաղ:

Ինչ վոր տեսնում եմ, լըսում իմ ճամփին —  
Չանձրացնում ե ինձ ամեն, ամեն բան,  
Գեղեցիկն ել ինձ հաճուքը չի տալի,  
Վոչ ել աչքերիդ հմայքն առաջվան:

Ես են առաջվան վիշտն ե ամենի,  
Վոր թափառական ջըհուդն ուներ հեգ.  
Շիրմի խավարին սոսկում ե նայի,  
Իսկ կյանքում հանգիստ չի գըտնում յերբեք:

Ել ուր փախչեմ յես ինքըս ինձանից.  
Թեկուզ հեռավոր յերկըի մի անկյուն,  
Ուր վոր ել գընամ՝ հետեւում ե ինձ  
Կյանքի ես ժանդը — մըտքիս դեմս անքուն:

Ուրիշներն այն ինչ, հաճույքից հարբած,  
Վայելում են գո՞ն ինչ ձըգել եմ յես...  
Ո՞վ, թող վայելեն ու յերնեկ հանկարծ  
Իրենց յերազից չըղարթնեն ինձ պես:

Յես պետք ե անցնեմ դեռ աշխարհ, աշխարհ,  
Քանի յետ նայեմ — անցլալս անիծեմ,  
Յեվ մի ըսփոփանք ունիմ ինձ համար —  
Վատթարն եմ տեսել — ինչ ել դա իմ դեմ:

Բայց են վատթարը... մի հարցնի եղ ինձ,  
Գնելթ արա, չըքնաղ, ու ժըպտա կրկին,  
Մի քաշի սակայն դիմակն իմ սըրտից —  
Տեսնելու տակի դժոխքն ահագին:

1894 փետրվար

Ն. ՆԵԿՐԱՍՈՎ,

### ՄԱՅՐԸ

Լսելով կռվի արհավիրքների,  
Ամեն մի ընկած նոր զոհի մասին,  
Յես չեմ ափսոսում կնոջն, ընկերին,  
Յեզ վոչ ել նույն խոկ իրան հերոսին...  
Կըմիսիթարվի, վոհ, կինը մի որ,  
Ընկերն ընկերին կանի մտահան.  
Բայց մի հոգի կա մի տեղ սգավոր —  
Նա հիշելու յե մինչև գերեզման...  
Այս մեր կեղծավոր, ստոր աշխարքում,  
Այսքան գարշելի գործերի շարքում  
Յես անկեղծ և սուրբ մի բան տեսա միայն —  
Թշվառ մայրերի արտասուքն և այն:  
Նրանք չեն մոռանալ իրանց զավակին,  
Վոր խորտակվել և արյունոտ արտում,  
Վորպես սգավոր ուսենին կրկին  
Չի բարձրացնելու ճշուղերը տրտում:

1894 հոկտ. 8

Ա. ՄԻՑԿԵՎԻՉ

### ԱՔԵՐՄԱՆԻ ԴԱՇՏԵՐՈՒԽ

Լողում եմ գարնան դալարի ծովում:  
Մըթնում ե որը... վոչ ձայն, վոչ շըշուկ:  
Յես լսում եմ ոձն ինչպես և սողում,  
Թիթեռը խոտում շարժվում կամացուկ...  
Այնպես հանգիստ ե. կարող ելի յես  
Լըսել ըդձալի կանչը կիտվալից...  
Բայց... հառաջ... այնտեղ հանգիստ և նույնպես...  
Զայն չե տալիս ինձ վոչ վոք ալնտեղից...

[1899]

Ա. Ա. ՊՈՒՇԿԻՆ

ՈԼԵԳԻ ՅԵՐԳԸ

Ցելնում ե ահա հըզոր Ոլեգը  
Խենթ խաղաներից վըրեժ առնելու,  
Նըրանց համարձակ հարձակման համար  
Գյուղերը պըրի-հըրի մատնելու:  
Ցեվ իր համհարզով, հագած կուռ զրահ,  
Գընում և նա սեղ նըժուզի վըրա:

Մըթին անտառից նրա հանդիման  
Գալիս ե ահա վըհուկ ծերունին,  
Մութ գալիքների մեկնիչն ու հըման,  
Կյանքում հընաղանդ միայն Պերունին,  
Աղոթք ու հմայքով իր դարն անցկացրած:  
Ցեվ Ոլեգ ծերին ընդառաջ գընաց:

— Ասա ինձ, գուշակ, ծերդ անմահների,  
Կյանքիս մեջ ինձ հետ ի՞նչ ե լինելու,  
Ցեվ, ի խընդություն չար վոստիների,  
Շուտով եմ արդյոք շիրիմ իշնելու:  
Բաց մեկնիր բոլորն, ինձնից չըքաշվես,  
Վարձը՝ քու սիրած ձին կըտամ յես քեզ:

— Զեն վախում գետերն յերկը մեծերից,  
Ցեվ պետք չի նըրանց պարզեն իշխանի,  
Նըրանց իմաստուն լեզուն վերերից  
Աղդված խոսում ե կամքը յերկընքի. —

Անհայտ են գալոց տարիքն ու մըթին,  
Բայց կարդում եմ զիրդ յես քու ճակատին:

ԴԵ միտքըդ պահիր իմ խոսքն այսորից:  
Փառքն ե կյանքի մեջ խընդում հերոսին.  
Հաղթության փառքով հըռչակված ես դու,  
Վահանդ Բյուզանդիո բարձըր դարպասին:  
Հընաղանդ են քեզ և ցամաք, և՛ ծով:  
Նայում են վոստիսըդ բախտիդ նախանձով:

ՑԵՎ կապույտ ծովի հեղինդուկ ալիք,  
Ահեղ փոթորկի ժամին կատաղի,  
ՑԵՎ նետ, և՛ պարսեր, և՛ նենգող դաշույն,  
Խընայում են միշտ կյանքը հաղթողի:  
Վերք չես առնիլ դու քու կուռ զըրահում,  
Հըզորին անտես վոգի յե պահում:

ՎՈՉ մի վըտանդից չի վախում քու ձին,  
Տիրոջ կամքը միշտ հասկանում ե դա.  
ՄԵՐԹ կանդնում ե հեղ նետերի տակին,  
ՄԵՐԹ թըռչում ոազմի դաշտերի վըրա.  
ՑԵՎ ցուրտ, և՛ կըսիլ վոչինչ են դըրան,  
Բայց... դա կըմինի պատճառ քու մահվան:

ՈԼԵԳԸ ինդաց. և սակայն մըթնեց,  
Մըռայլեց հանկարծ չարագույժ մըտքից.  
Լուռ ու մըտախոն թամբիցը բըռնեց,  
Ներքև ե իշնում սիրած նըժույզից,  
Ու վերջին անդամ իր հին ընկերին  
Փայփայում, շոյում, փարում ե վըզին:

— ԴԵՅ, մընաս բարյավ, վաղեմի ընկեր.  
Ժամանակն յեկավ մեր բաժանվելու.

Հանգիստ կաց հիմա, ել վոտըս բընավ  
Քու ասպանդակի մեջ չեմ դընելու:  
ԴԵՅ, գընա, բայց միշտ հիշեր Ուեփին:  
Եյ, մանկլավիկներ, հեռու տարեք ձին:

— Մածկեցէք սըրան թալածի գորգով,  
Սանձիցը բըռնած մարգերըս տարեք,  
Լողացրէք, պահեք ընտրած հատիկով,  
Ազբյուրի վըճիս ջըրով ջըրեցէք:  
Յեվ մանկլավիկներն խկույն ձին տարան,  
Մի ուրիշ նոր ձի մոտ բերին նըրան:

Տընծում ե խմբով անմահ Ուեզը  
Զըվարթ ձայներով լիք բաժակների,  
Ճերմակ ե նըրանց գըլիսի ալիքը,  
Ինչպես վաղորդյան ձյունը լեռների...  
Հիշում են նըրանք որերն անցկացրած,  
Յեվ կըսիմսերը միասին վարած:

— Բայց իմ ընկերը, գոչեց Ուեզը.  
Ո՞ւր ե, ինձ ասեք, սիզապանձ իմ ձին.  
Առաջ ե արդյոք, այնպես սըրնթաց,  
Այնպես կըրակոտ, աշխուժ տակավին...  
Յեվ լըսում ե, վոր սեպ բըրի վըրա  
Մահու սե քընով վաղ ե քնել նա:

Խոնարհեց գըլուխն Ուեզը հըզոր,  
Յեվ միաք ե անում. — Ի՞նչ յեղավ հըման.  
Սըտախոս կախարդ, անխելք ալեոր,  
Թե չելի լսել յես քու սըտության,

Կարեյի մինչ որս իմ ձին յես հեծնել  
Յեվ ձիու վոսկերքն ուզում ե տեսնել:

Գընում ե Ուեզն ահա պալատից,  
Նըրա հետ իգորն և հյուրերը հին.  
Տեսնում են ձիու վոսկերքը թափված  
Բըլուրի վըրա, Դընեպրի ափին:  
Փոշին ծածկում ե, անձըկն վողողում,  
Ու սեզը վըրեն քամին որորում:

Վոտն զգույշ գըրավի իշխանը գանգին  
Ու կանչեց. — Քընիր, միայնակ ընկեր,  
Քեզնից շատ ապրեց քու տերն ալեսոր.  
Թարմ շիրմիս վըրա դու չես մահարեր  
Տապարի տակին սեզը ներկելու,  
Քու տաք արյունով աճյունս հարգելու...

— Ահա թե ուր եր որհասըս պահված.  
Այս չոր վոսկերն եր ինձ մահ սպառնում:  
Այս ինչ՝ անկենդան գանգիցը հանկարծ  
Ֆըշալով սողաց մի ոճ չարաթուկն,  
Սև թոկի նըման վաթաթվեց վոտքին,  
Իշխանն ոձահար գոռաց ցավագին:

Փըրփրուն թամերը շըրջան են առնում  
Ուեզի մահվան տըխուր հարգինքին,  
Իգորն ու Ուգան բըրուրի վըրա,  
Նըստած ե խումբը Դընեպրի ափին —  
Հիշում են քաջերն որերն անցկացրած  
Յեվ կոփմերը միասին վարած:

Զ Ր Ա Հ Ե Ղ Ջ Ը

Ներս վագեցին մանուկները  
Ու կանչում են հորն ըշտապ.  
— Ա'պի, ապի, յեկ, մեր թռող  
Մեռել հանեց գետի ափ։»  
— Սուտ եք ասում, շան լակոտներ,  
Գոռաց հայրը ահարեկ.  
Հսպասեցեք դուք հալա դեռ,  
Մեռելն հետո կըտեսնեք։  
  
— Դիվան կըդա — պատասխան տուր.  
Ցավի միջում կըմընամ. —  
Հընար չըկա, բեր, այ կընիկ,  
Շորերըս տուր, մի գընամ։  
— Ո՞ւր ե մեռելն. — Ա'յ, ապի, այ։»  
Ճիշտ վոր գետի յեղերքին,  
Թաց թռոի մոտ, գետնի վըրա  
Տարածված եր մի մարմին։  
  
Զարհուրեկի դիակն ուռել  
Կապլտել եր այլանդակ։  
Արդյոք տանջլած մի թշվառ եր  
Հանգիստ գըտած ջըրի տակ  
Մի գետակուր ձըկնորս եր են,  
Թե զինեմոլ մի ջահել  
Թե անրզգույշ վաճառական  
Հարամու յեր պատահել...

Բնչին ե պետք, Աչք ածելով  
Լշտապում ե գյուղացին,  
Վոտից բըռնած, յետ քարշ տալով  
Զուրն ե տանում խեղղվածին։  
Ու թիակով գետի յեղըից  
Զուրը հըրեց նա նըրան,  
Ու դիակը գընաց՝ նորից  
Փընտրի խաչ ու գերեզման։

Մեռելն յերկար ջըրի միջին  
Ցած եր իջնում ճոճելով,  
Աչքով ճամփեց մեր գյուղացին  
Ու տուն դարձավ կանչելով.  
— Դեսը կորեք, այ լակոտներ,  
Յեկեք, բան տամ ձեղ — տանեմ,  
Ամա թե վոր ձեն եք հանել,  
Հոգիներըդ կըհանեմ։

Գիշերն ուժգին բուք վերկացավ,  
Գետն յելնում ե, վորոտում...  
Մարխը արգեն երվեց, հանգավ  
Լուռ ու ծըխոտ խըրճիթում։  
Վողջ քընած են, Անքուն պառկած  
Միտք ե անում գյուղացին...  
Բուքն վոռնում ե... մին ել հանկարծ  
Լուսամուտը բախեցին...  
  
— Ո՞վ ես, — Ներս թող, այ տանտեր, ներս...  
— Ա'յ, ներս ու քեզ չոռ ու ցավ.  
Ի՞նչ ես շըրջում կայենի պես,  
Վոր սատանեն քեզ բերավ։

Ի՞նչ անեմ քեզ, ասա, հիմի.  
 Տեղը նեղ ե, տունը մութ:  
 Ու ծույլ ձեռքով, արրտընջալով՝  
 Բաց ե անում լուսամուտ:  
 Ցոլում ե լույսն ամպի տակից.  
 Անա կանգնած... մի մերկ ձարդ.  
 Չուր ե հոսում նրա մերքից,  
 Բաց են աչքերն ու անթարթ:  
 Կախ են ընկած բազուկները,  
 Վողջ կարկամած սոսկալի,  
 Ռւուծ մարմին քառչանգները  
 Կըպած՝ սեխն են տալի...  
 Ակից մարեց՝ ճանաչելով  
 Իր մերկ հյուրին նա հանկարծ.  
 Փեղկը խփեց ու դողալով՝  
 — Այ դու ճաքես, քըրթմընջաց:  
 Ամբոխվեցին մըտքերը մութ.  
 Մինչեւ լույսը նա դողում,  
 Մինչեւ լույսը լուսամուտ  
 Բախում եյին ու բախում...

Ամբոխն ահեղ զըրույց ունի,  
 Թե այս դեպքից գյուղացին  
 Հապասում ե ամեն տարի  
 Միշտ նույն որը խեղդվածին:  
 Խառնվում ե որն առավոտից,  
 Գիշեր գալի բուք ու մութ,  
 Ու խեղդվածը ամբողջ գիշեր  
 Բախում դուռն ու լուսամուտ:

## Զ Մ Ե Ռ Վ Ա Ի Ր Ի Կ Ո Ւ Ն Ը

Հողմը մեղով լերկինքն առնում,  
 Գալարում ե բուքը ձյան,  
 Մին մանկան պես լաց ե լինում,  
 Մին վոռնում ե զերթ գազան.  
 Մին վայրենի սուլում պեսպես,  
 Աղմբկում ե տանիքում,  
 Մին՝ ուշացած ճամբորդ, ասես՝  
 Լուսամուտն ե նա թակում:

Մեր խըրճիթը, աղքատ ու հեն,  
 Յեվ մըթին ե, և աըխուր.  
 — Ի՞նչ ես նըստել պատի տակին,  
 Իմ պառավըս, եղած լուռ  
 Հոգնել ես դու փոթորիկի  
 Վոռնոցներից խելագար,  
 Թթ նիրհում ես քո իլիկի  
 Բըզզոցի տակ միալար:

Աըի խըմենք, բարի ընկեր  
 Իմ սե, ջահել որերի,  
 Խըմենք դարդից, բաժակըդ բեր,  
 Միբաները բաց կը մնի,  
 Յերգիր, վժնց եր ապրում խաղաղ  
 Հավքը ծովի են ափին,  
 Յերգիր, վժնց եր աղջիկը վաղ  
 Զուբը գնում մինչ արփին:

Հողմը մեգով յերկինքն առնում,  
Գալարում ե բուքը ձյան,  
Մին՝ մանկան պես լաց ե լինում,  
Մին՝ վոռնում ե զերթ գաղան:  
— Արի խմենք, բարի ընկեր  
իմ սկ, ջահել որերի  
Խըմենք դարդից, բաժակըդ բեր,  
Սիրտներըս բաց կըլինի:

1909

ՎԻԼՍՈՆԻ «ԺԱՆՏԱԽՏԻ ՔԱՂԱՔԸ»  
ՎՈՂԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Կար ժամանակ, վոր ծաղկում եր  
Մեր աշխարհքը անխռով,  
Աստծո տաճարն վորոտում եր,  
Թընդում եր տոն որերով:  
Աղմըկալի մեր դպրոցում  
Յերգում մանկունք մեր մատաղ,  
Շողում եյին լիքը հանդում  
Սուր գերանդին ու մանդաղ:

Այժըմ թափուր յեկեղեցին,  
Դպրոցը փակ, խըլացած,  
Արտը կըծղած հանդի միջին,  
Թավ պուրակը դատարկված.  
Ու գյուղն երված մի տան նըման  
Կանգնած ավեր, ամայի,  
Վրդղ պապանձված, լուռ չի միայն  
Դամբարանը ահոելի:

Մեռել մեռել ամեն վայրկան,  
Ու ապրողներն Աստըծուն  
Աղօթում են միաբերան  
Նըրանց հոգուն փրկություն:  
Մեռել, մեռել ամեն վայրկան,  
Ու շիրիմներն իրար քով  
Սարսափահար հոտի նման  
Մեղմըվում են խիտ շարքով:

Հ. Թումանյան — 4

Գարուն կյանքիս յեթե նույնպես  
Վիճակված ե վաղ շիրիմ,  
Ով դու, ում վոր սիրել եմ յես,  
Հոգուս անզույգ մըտերիմ,  
Զըմոտենաս իմ շրթունքին  
Քո համբուլբով կենսաձիր,  
Զմոտենաս իմ դիակին,  
Հեռվից հեռու հետեւիր...

Ապա ձըգիր դու մեր դյուղը,  
Փախիր ալլուր, հեռացիր,  
Հոգուդ տանջանքն ու յերկուղը  
Վանիր ենտեղ ու կացիր:  
Ու յերբ կանցնեն ես որերը,  
Այց յեկ շիրմիս զեթ մի հեղ,  
Իսկ յես վոչ քեզ, վոչ քո սերը  
Զեմ մոռանալ և ենտեղ...

1910

Ֆ. Շ Խ Լ Լ Ե Ր

## Ա Ն Ձ Ո Ւ Կ

Ա՛խ, վայրենի, սառն ու խավար  
Ալս հովիտի խորքերից  
Թե գըտնեցի մի ճանապարհ  
Ու ապրեցի յես նորից...

Ահա հեռվում ճոխ բըլուրներ  
Մըշտագարուն, ծաղկազարդ:  
Ինչժու, ինչժու չունիմ թևեր  
Այստեղ թըռչեմ յես ազատ:  
Քընարն ախտեղ ուրախ հընչում,  
Խոսում ե ձայնն յերկընքի,  
Զեփյուռները մեղմով շընչում,  
Բուզը են խընկում գարունքի:

Պերճ սաղարթում շողշողում են  
Պըտուղները վոսկեվառ.  
Զըկան ախտեղ բուք ու ձըմեռ,  
Ու ծաղկունքը միշտ դալար:

Ա՛խ, ինչ լավը ե՝ այն անխըսով  
Զինջ որերի լուսի մեջ,  
Այն անթառամ ծաղկանց բույրով  
Հարքել անվերջ ու անվերջ...

Ա. ԿԱՅԼՅՈՎ,

ԳԵՂՉՈՒԿԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Նըստել եմ շըվար  
Ու միտք եմ անում,  
Թե ինչպես մենակ  
Ապրեմ աշխարհում:  
Վոչ ջահիլ կընիկ  
Ուսնեմ իմ կողքին,  
Վոչ թե ու թիկունք  
Մըտելիմ ընկեր,  
Վոչ մի տաք անկյուն,  
Վոչ արծաթ վոսկի,  
Վոչ սարքած գութան,  
Վոչ նըժույդ մի ձի...  
Պակաս որի հետ  
Միմիայն մի գանձ՝  
Քարի նըման ույժ  
Տըվավ ինձ հերը.  
Բայց, ախ, հենց են ել  
Ոտար դըռներում  
Կերան, մաշեցին  
Դարդ ու ցավերըս...  
Նըստել եմ շըվար  
Ու միտք եմ անում,  
Թե ինչպես մենակ  
Ապրեմ աշխարհում...

1899

ՀՈՎՎԻ ՀՐԱԺԵՇԸ

Մնաք բարով, դնւք, արոտներ սիրուն,  
Ամառն անց կացավ, հոտն իջնում ե տուն:

Մենք յետ կը գանք ձեզ նորեկ գարունքին,  
Յերբ զարթնեն ուրախ յերգերը կըրկին,  
Յերբ վոր սարերը դրոգվեն կանաչով,  
Յերբ վոր ջըրերը վազեն կարկաչով:

Մնաք բարով, դնւք, արոտներ սիրուն,  
Ամառն անց կացավ, հոտն իջնում ե տուն:

1899

## ՖԻՐԴՈՏՍԻ

Կուզելի հալվել, ձուլվել իմ յերգին  
Ու այս տողերում թագնվել ծածուկ,  
Վոր յերբ կարդացիր մի որ, իմ անգին,  
Կարող լինելի անտես, կամացուկ,  
Ամեն հընչունի, ամեն խոսքի մեջ  
Դիպչել շուրթերիդ, համբուրել անվերջ...

[1903]

## ՀԻՄԵՆ

### ՀԻՎԱՆԴ ԵՄ, ՄԱՅՐԻԿ

Հիվանդ եմ, մայրիկ, նանիկ ասա ինձ,  
Վոր ասում եմիր յերեմն որրանում,  
Իմ մաշված կը քերին խաչ քաշիր նորից  
Ու նանիկ ասա, քունըս չի տանում:

Թող վայր դընեմ յես գըլուխս հոգնած.  
Գիշեր ե արդեն, ծաղիկը հանգչում,  
Վաղուց ե անտուն պանդուխտն ել քընած,  
Մենակ քու հիվանդ զավակն ե տանջվում:

Թու հեղ թըռչնակը վախցած ե բուքից...  
Ա՛խ, յես դեռ մանկուց շատ ցավեր տեսա,  
Թունն ել, հանգիստն ել փախան իմ աչքից...  
Մայրիկ ջան, մայրիկ, ինձ նանիկ ասա...

[1903]

Մ. Գ. Ա. Կ. Ի.

## ՎԱԼԱԽԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ

Դունավի ափին ապրում եր Փերին,  
Հաճախ գետի մեջ լողանում եր նա:  
Մի որ ել անփույթ, անզգույշ Փերին  
Ընկավ ձկնորսի ուռկանը ահա:  
Սաստիկ վախեցան ձկնորսները խեղճ...  
Նրանց հետ եր բայց Մարկո պատանին,  
Գեղեցիկ Փերուն սեղմեց գըրկի մեջ,  
Ու համբուրում եր, գըգվում սիրունին:  
Փերին, մի ճըկուն վոստիկի նըման,  
Խալուռմ եր գըրկում, վոլորվում, խաղում,  
Մըտիկ եր տալի տըղի աչքերին  
Ու մըտքի միջին բարակ ծիծաղում...  
Փալքալեց Փերին տըղին ամբողջ որ,  
Բայց հենց գիշերը հասավ մըթագին,  
Հանկարծ չըքացավ, կորավ նորից նոր,  
Ու սաստիկ տըխեց Մարկովի հոգին:  
Գիշեր ու ցերեկ գետի ափերին  
Շըրջում ե Մարկոն, հոգոց ե հանում,  
Փնտրում ե կանչում. «Ո՞ւր ե իմ Փերին...»  
Կըկչում են ալիք — «Մենք չենք իմանում:»  
— Ո՞ր, սառն ալիքներ, դուք խաբում եք ինձ,  
Ինքներդ եք խաղում նրա հետ թագուն.»  
Ճըչաց պատանին ու թըռավ ափից,  
Թըռավ՝ գետի մեջ գըտնի իր Փերուն...

Դունավի ափին ապրում ե Փերին  
Ու, ինչպես առաջ, ալժմ ել լողանում,  
Իսկ Մարկոն չը կա... Բայց նըրա մասին...  
Բայց նըրա մասին գեթ յերգ ե մընում:

Իսկ դուք ապրում եք աշխարհի վրա  
Ինչպես կուլը, անսիրտ, չընչին սողուններ.  
Վոչ ձեզնից հետո գըրույց կը մընա  
Յեվ վոչ ձեր մասին յերգ կասեն անմեռ:

1906

ԻԼԻՍ. ՃԱՎՃԱՎԱՋԵ

I

ԳԱՐՈՒՆ

Կանաչ ե նորից.  
Ծիծառը լերգում,  
Վազը հըրճվանքից  
Լալիս ե ալգում:  
Հովիտ ու լերինք  
Ծաղկել են պես պես, —  
Իսկ դու, հայրենիք,  
Յերբ պիտի ծաղկես...

1907

II

ԵԼԵԳԻԱ

Լուսինն աղոտ լույս ե փըռում  
Իմ աշխարհին մայրենի,  
Կուլ ե գընում կապույտ հեռվում  
Ճերմակ շարքը լեռների:

Զեն չի գալիս վոչ մի կողմից,  
Վրաստանը մութն ու լուս,  
Վըրացին ե հաղթված քընից  
Տընքում տանջված ու տխուր:

Մենակ եմ իմ: Քընած ե նա,  
Քընած շուրջը ու հեռու...  
Ա'կ, Աստված իմ, քընած, քընած,  
Յերբ ե արդյոք զարթնելու...

1907

Վ. Գ Յ Ո Թ Ե

\* \* \*

Լերանց շարքերը  
Նիրհում են մըթնում,  
Խաղաղ մարզերը  
Մըշուշ և պատում.  
Ճամփեն հանդարտվել,  
Զի շարժվում քամի,  
Ուր վոր ե՝ դու իւր  
Կը քընես հիմի:

Վ Ա Ր Դ Ը

Փոքրիկ աղան մի վարդ տեսավ,  
Տեսավ մի վարդ դաշտի միջին.  
Վարդը տեսավ, ուրախացավ,  
Մոտիկ վարեց սիրուն վարդին.  
Սիրուն վարդին, կարմիր վարդին,  
Կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասավ. — Քեզ կը պոկեմ,  
Ա՛յ, կարմիր վարդ դաշտի միջին:  
Վարդը ասավ. — Տես, կը ծակեմ,  
Վոր չը մոռնաս փըշոտ վարդին.  
Փըշոտ վարդին, կարմիր վարդին,  
Կարմիր վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր տըղան պոկեց,  
Պոկեց վարդը դաշտի միջին.  
Փուշը նըրա ձեռքը ծակեց,  
Բայց ել չոգնեց քընքուշ վարդին.  
Քնքուշ վարդին, կարմիր վարդին,  
Կարմիր վարդը դաշտի միջին:

[1907]

## ՈՅՈՒԿԿԵՐՏ

Մի լերգ կա մանկուց, մի յերգ կա մանկուց  
Դեռ իմ ականջում.  
Ա՛խ, ի՞նչքան հիմի, ախ, ի՞նչքան հիմի  
Հեռու յե հընչում:  
Ճախրում եր ծիծառ, ճախրում եր ծիծառ  
Գարունը բերում,  
Աշխարհքը պայծառ, աշխարհքը պայծառ  
Ծաղկում եր, բուրում:  
Հայրենի դաշտեր, հայրենի դաշտեր,  
Ա՛խ, վոնց եմ ուզում,  
Զեր գըրկում մին ել, ձեր գըրկում մին ել  
Թըռչեմ յերազում:  
Յերբոր հեռացա, յերբոր հեռացա  
Լիքն եր վողջ ու շեն,  
Յերբոր յետ դարձա, յերբոր յետ դարձա՝  
Դատարկ եր արդեն:  
Գալու յե գարուն, գալու յե գարուն —  
Աշխարհ լըցվելու.  
Բայց իմ սիրտն, ավաղ, բայց իմ սիրտն, ավաղ,  
Ել չի բացվելու:  
Յեկ վոչ մի ծիծառ, և վոչ մի ծիծառ  
Չի բերի իր հետ,  
Ինչ վոր կորցըրի, անդարձ կորցըրի  
Անցած յերգի հետ:

## ՀԱՅՆԵ

\* \* \*

Հեռու, հեռու կը թըռցընեմ  
Քեզ իմ յերգի թեսերին,  
Սքանչելի մի տեղ գիտեմ  
Յես Գանգեսի ափերին:  
Պարտեղն այնտեղ ծաղկում ե ճոխ  
Լուսնի խաղաղ լուսի տակ,  
Իրենց քըրոջն ըսպասում են  
Լուսուները ըսպիտակ:  
Մանուշակներն աստղերի դեմ  
Աչք են անում ու խընդում,  
Իրար հակված թոթովում են  
Վարդերն անուշ հեքյաթում:  
Վիթերն յերկչոտ ցատքըտում են,  
Խըրտնած պըշնում իրարու.  
Գանգեսը լայն, հանդիսավոր,  
Հոսում հանգարտ ու հեռու:  
Այնտեղ պիտի անհոգ պառկենք  
Արմավենու ըստվերում,  
Սեր վայելենք, սուզվենք, ապրենք  
Յերազների աշխարհում:

ԹԵՐՈՒԿԱԾՈՒՅԻՆ

ԹԱՐԻԱՅԻ ՅԵՐԳԸ

Մեր ինչին ե պետք, թե Արևն անմահ  
Անդըրաստեղյան լազուր աշխարհում  
Առնում ե շրջանն իր հավերժական,  
Թե ցած ե հոսում ճոխ ալիքներով  
Իր ակնախըտիդ շողերն անարատ:  
Յերկինք ու յերկիր, մեղ մըտիկ արեք,  
Ի՞նչ ենք մենք...

Մեր ինչին ե պետք — կինը նորատի  
Հստանում ե թանգ իրեն ամուսնուց  
Քընքուց գրավը տարփալի սիրո.  
Մեր ու զավակներ ով ե տվել մեղ...  
Յերկինք ու յերկիր, մեղ մըտիկ արեք,  
Ի՞նչ ենք մենք...

Մեր ինչին ե պետք, թե ամենազոր  
Կա աստվածային սուրբ յերբորդություն  
Յեվ արարչական, և միշտ պահպանող,  
Յեվ միշտ նորոգող համալն աշխարհի.  
Զի փալլում, ավանդ, նրանց փառքը մեղ:  
Յերկինք ու յերկիր, մեղ մըտիկ արեք,  
Ի՞նչ ենք մենք...

Մեր ինչին ե պետք, թե հաշտ ու զոհի  
Ծուխն ու ձենձերը յերկինք ե յեխում,  
Թե ծիլ ու ծաղիկ գետինն են ծածկում,  
Թե ըար ու պտուղ ծառերն են զուզում,  
Յեվ կամ սրբազն ջուրը Գանգեսի  
Թուլալում ե պարզ խաղաղ հովիտում:  
Յերկինք ու յերկիր, մեղ մըտիկ արեք,  
Ի՞նչ ենք մենք:

Քեզ, անմահ ինդրա, ով աչքի խընդում,  
Ամենքից պաշտված դու գանձ յերկնային,  
Չենք կարող աստված, մենք քեզ աղոթել  
Վոր մեր խորհրդով չանարդենք բնավ  
Քո աստվածային լըսելիքը սուրբ:  
Յերկինք և յերկիր, մեղ մըտիկ արեք,  
Ի՞նչ ենք մենք:

Իզուր մերժեցի յես մահը դաժան  
Յեվ անտառների խորքերումը խուլ  
Սրբազն հեղումն արի լիասիրտ,  
Վոր աստվածների սըրտերը մեղմեմ,  
Ուզ, նրանք փախան իմ մոտենալիս:  
Յերկինք ու յերկիր, մեղ մըտիկ արեք,  
Ի՞նչ ենք մենք:

Ուզ են ակները են պարզ ջրերի,  
Ուզ մեր ծալավը կոտրել կարենանք,  
Լոկ անասունի վոտքի տեղերի  
Հոտած ջուրն ե մեր ըմպելին միակ:  
Յերկինք ու յերկիր, մեղ մըտիկ արեք,  
Ի՞նչ ենք մենք:

Ու՞ր են գաշտերը, ուր վոր մեղ համար  
Ածում են բրինձն ու այլ բարիքներ.  
Չըկա աշխարհքում ցոլնի մի ցողուն  
Մի խոտ, մի ծաղիկ, վոր մեղ պատկաներ:  
Յերկենք ու յերկիր, մեղ մըտիկ արեք,  
Ի՞նչ ենք մենք:

Յերբ հովիտներից ստվերը ծնում,  
Վեր, անտառների բարձունքն ե յելում,  
Յերբ հովիվ յերգով թողնում ե հանդը,  
Աղջկը տանը ընթրիք պատրաստում,  
Յերբ շանս են տալի թերմացքն իրիկվան --  
Ի՞նչ ուտի արդյոք և ուր են ժամին,  
Ուր գնա պարիան, ուր հանգստանա...  
Յերկենք ու յերկիր, մեղ մըտիկ արեք,  
Ի՞նչ ենք մենք...

1910

Թ Ա Մ Ա Ս Հ Ա Կ Դ

Փ Ո Թ Ո Ր Ի Կ

Ծովը խառնըված,  
Շանթ, հողմ ու կարկուտ.  
Յերկենքը բըռնած  
Մեղ, մըռալ ու մութ:

Խըռոված տարերք  
Իրար են յեկել  
Յերկենք ու յեղերք  
Փակել, մթագնել:

Ծովի ահագին  
Խորքերն հիմն ի վեր,  
Ավագն ալիքին  
Խառնող դուք ուժիր, --

Ի՞նչ եք շըպըտում  
Ցայտերն ամպերին,  
Ի՞նչ եք ըսպառնում  
Չըկնորսի նավին:

Կըռվում տըրորված,  
Դալկացած հեղին,  
Մի տաք փըրփըրած  
Զըկ հորձանքին:

Կալծակի վաւլով  
Թողեք խեղճ մարդուն,  
Թողեք ապահով  
Հասնի իլեն տուն:

Ենտեղ ձեռները  
Մեկնած յերկնքին՝  
Մընում են փոքրերն  
Իրենց հայրիկին:

Կինն ենտեղ լալով  
Աղոթք և անում...  
Ի՞նչ եք աղքատի՝  
Նավին ըսպառնում:

Ո՞վ, հասիր, շուտով,  
Աստված բարերար,  
Հուղված և ծովը,  
Յերկինքը խավար...

[1911]



Ա. Բ Լ Ո Կ

### ԾՈՎԻ ՅԵՐԳԸ

Ծովին ինձ նըշանի մատանի բերեց,  
Ծովին իմ արևառ լերեսն համբուրեց:  
Հասներվեց խոռվեց ծովի,  
Անհարսնացու խորքը ծովի:

Կյանքն անհատ և նըրա հետ,  
Մահը անհայտ՝ նըրա հետ,  
Պաղ ու աղատ նա հավետ:

Ու ձեմում ենք բացերն անցած,—  
Կապույտ ջըրեր, վարդ լուսաբաց...  
Շընչիր, աղի ու կատաղի դու քամի,  
Հերքը խըռիվ, յերգը ցըրիվ տուր, քամի,  
Իրար խառնիր, քըշիր նալ ու ջուր, քամի:

1921 սեպտ. 3

«ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՍԵՐԻԱՅՈՎ, ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍՔՆ

(Կազմած)

	№ №	Գ Ա ը
1. Հ. Թումանյան — Պոեմներ . . . . .	1—2	— 55
2. Դեմյան Բեդիք — Պոստանավորներ և առակներ . . . . .	3	— 35
3. Գ. Սումբուկյան — Պեղու . . . . .	4—6	1 —
4. Մ. Շոլոխով — Հերկած խողան . . . . .	7—14	3 40
5. Մարգարիտ և Նոյի ագռավը . . . . .	15—16	— 55
6. Նարդս — Աննա Մարոյան . . . . .	17—18	— 65
7. Շեխապիր — Վեհափեկի Վաճառականը . . . . .	19—21	1 15
8. Հ. Թումանյան — Մասունցի Դավիթը . . . . .	22	— 35
9. Զապել Յեսայան — Կրակե շապիկը . . . . .	23—24	— 65
10. Միքայ Մարկովիչ — Բրոգարկա . . . . .	25—28	1 60
11. Հ. Թումանյան — Լեզենյաներ, բալադներ, յերգեր . . . . .	29, 33, 39	1 15
12. Յոհ. Բիբինը — Գորչ շարքեր . . . . .	30	— 25
13. Շիրվանզադե — Արտիստ . . . . .	31—32	
14. Ատ. Զորյան — Դրադարանի աղջիկը . . . . .	34—35	— 70
15. Հ. Պարոնյան — Բաղադրավարության վնասներ . . . . .	36—38	1 20
16. Շեխապիր — Մակրեժ . . . . .	40—42	1 15
Մամուլի տակ են		
17. Հ. Պարոնյան — Մհեմապատիվ մուրացկաններ . . . . .	43—45	
18. Շիրվանզադե — Վարդան Ահրումյան . . . . .	46—47	
19. Հ. Թումանյան — Թարգմանություններ և փոխադրություններ . . . . .	48—49	
20. Շիրվանզադե — Զար վոդի . . . . .		
21. Նարդս — Բնակը պատմվածքներ . . . . .		
22. Շիլիք — Վեհափեկ Տելլ . . . . .		
23. Շեխապիր — Ոթելլո . . . . .		
24. Շեխապիր — Համես . . . . .		

ՀՀ Ազգային գրադարան



NL0348086

32320

ԳԻՒԾ 65 4.  
ԿԱԶՄԸ 35 4.



Օ. ԹՈՄԱՆՅԱ  
ՊԵՐԵՎՈԴՅ

Հայ ՀՍՀ Արմենիա, Էրևան